

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ

JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2 (41)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2023

«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал «Вестник Ереванского университета. Международные отношения, Политология». Выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета».

Three issues of “Journal of Yerevan University. International Relations, Political Science” are published annually. The journal has been published since 2010. It is the successor of “Journal of Yerevan University” published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.

Գլխավոր խմբագիր՝ Պետրոսյան Գեղամ (պ.գ.դ., պրոֆ.)

Պատասխ. քարտուղար՝ Ալեքսանյան Աշոտ (ք.գ.դ., պրոֆ.)

Ազյան Վահագն (պ.գ.թ., դոց.), Ավագյան Արսեն (պ.գ.դ., պրոֆ.), Գալստյան Խաչիկ (ք.գ.դ., պրոֆ.), Ենգոյան Աշոտ (ք.գ.դ., պրոֆ.), Եփրեմյան Տիգրան (պ.գ.թ.), Լեպեխին Վլադիմիր (ՌԴ, փ.գ.թ.), Կոմլևա Վալենտինա (ՌԴ, ս.գ.դ., պրոֆ.), Կրյուչկով Իգոր (ՌԴ, պ.գ.դ., պրոֆ.), Կուրիլև Կոնստանտին (ՌԴ, պ.գ.դ., դոց.), Մանուկյան Վլադիմիր (պ.գ.թ., դոց.), Մարգարով Ալեքսանդր (ք.գ.դ., պրոֆ.), Մարուքյան Արմեն (պ.գ.դ., պրոֆ.), Պետրոսյան Վահրամ (պ.գ.թ., դոց.), Սաֆարյան Արամ (պ.գ.թ., դոց.), Սիլև Նիկոլայ (ՌԴ, պ.գ.թ.), Քեռյան Գարիկ (ք.գ.դ., պրոֆ.)

Редакционная коллегия:

Главный редактор: **Петросян Гегам** (д.ист.н., проф.)

Исполнительный секретарь: **Александрян Ашот** (д.пол.н., проф.)

Авагян Арсен (д.ист.н., проф.), **Аглян Ваагн** (к.ист.н., доц.), **Галстян Хачик** (д.пол.н., проф.), **Енгоян Ашот** (д.пол.н., проф.), **Епремян Тигран** (к.ист.н.), **Керян Гарик** (д.пол.н., проф.), **Комлева Валентина** (РФ, д.соц.н., проф.), **Крючков Игорь** (РФ, д.ист.н., проф.), **Курьев Константин** (РФ, д.ист.н., доц.), **Лепехин Владимир** (РФ, к.ф.н.), **Манукян Жак** (к.ист.н., доц.), **Маркаров Александр** (д.пол.н., проф.), **Марукян Армен** (д.ист.н., проф.), **Петросян Ваграм** (к.ист.н., доц.), **Сафарян Арам** (к.ист.н., доц.), **Силаев Николай** (РФ, к.ист.н.)

Editorial Board:

Editor-in-chief: **Petrosyan Gegham** (Sc. D. in History, Professor)

Executive Secretary: **Aleksanyan Ashot** (Sc. D. in Political Science, Professor),

Aglyan Vahagn (Ph.D. in History, Associate Professor), **Avagyan Arsen** (Sc. D. in History, Professor), **Engoyan Ashot** (Sc. D. in Political Science, Professor), **Galstyan Khachik** (Sc. D. in Political Science, Professor), **Keryan Garik** (Sc. D. in Political Science, Professor), **Komleva Valentina** (RF, Sc. D. in Sociological Sciences, Professor), **Kryuchkov Igor** (RF, Sc. D. in History, Professor), **Kurylev Konstantin** (RF, Sc. D. in History, Associate Professor), **Lepekhin Vladimir** (RF, Ph.D. in Philosophy), **Manukyan Zhak** (Ph.D. in History, Associate Professor), **Markarov Alexander** (Sc. D. in Political Science, Professor), **Maruqyan Armen** (Sc. D. in History, Professor), **Petrosyan Vahram** (Ph.D. in History, Associate Professor), **Safaryan Aram** (Ph.D. in History, Associate Professor), **Silaev Nikolay** (RF, Ph.D. in History), **Yepremyan Tigran** (Ph.D. in History)

**ՀՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ
ՀՍԱԿԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ
ԱՇԽԱՐՀՈՒՄ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ
ՀԱՐԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐՔՈՒ***

ԱԼԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Գլոբալ հակադրության ներկա փուլը Արևմուտքի ու ՌԴ-ի միջև աննախադեպ է թե՛ իր ծավալով, թե՛ իր խորությամբ, թե՛ առճակատման բնույթով: Նման հակադրությունը պայմաններ է ստեղծում, որ նոր դեր ու նշանակություն ստանան միջազգային անվտանգության ապահովման մեխանիզմները, կազմակերպությունները և միջազգային իրավունքը: Հակադրության ներքո փոփոխվում է ԽՍՀՄ փլուզումից հետո ձևավորված աշխարհակարգը և գլոբալ ուժային հավասարակշռությունը:

Հվ. Կովկասում ուժային հավասարակշռությունը փոխվեց 2020 թ. պատերազմի արդյունքում: Նշենք, որ մինչ օրս մեր տարածաշրջանում ուժային որևէ բալանս դեռևս չի ձևավորվել: Դրա մասին են վկայում ՀՀ-ի և Արցախի շուրջը շարունակվող լարվածությունը, տեղային ռազմական սադրանքերը: Հողվածում վերոնշյալ իրողությունների համատեքստում քննարկվում են ՀՀ ազգային շահերի հստակեցման հարցադրումները, ներկայացվում է, թե ինչ գործոններ են դրանց վրա ազդում ներկա պայմաններում, կարևորվում է ազգային շահերը ձևակերպելու գործընթացում ռեսուրսապահովվածության դերը: Սույն ուսումնասիրության մեջ ՀՀ ազգային շահերի ձևակերպման հարցում կարևոր դեր է տրվում անվտանգային ռիսկերի և ռազմական պարադիգմի ընտրությանը, որոնք պետք է արտացոլեն տարածաշրջանում դեռևս չձևավորված ուժային հավասարակշռությունը: Հողվածում կարծիք է հայտնվում, որ ՀՀ անվտանգության ապահովման գործընթացում պետք է իրատեսական ու պթափ գնահատվեն ՌԴ-ի հետ դաշնակցային հարաբերությունները:

Բանալի բառեր - *ուժային հավասարակշռություն, ազգային շահ, ՀՀ, Ադրբեջան, ՀԱԳԿ, դաշնակցային հարաբերություններ, Հարավային Կովկաս, ռազմաքաղաքական ներուժ, հավաքական անվտանգություն, անվտանգային ռիսկ*

Քաղաքակրթական և աշխարհաքաղաքական գլոբալ զարգացումները փաստում են, որ ժամանակակից աշխարհը ոչ միայն այլևս չի տեղավորվում ԽՍՀՄ փլուզումից հետո ձևավորված փաստացի միաբնեռ աշխարհակարգի սահմաններում, այլև տեղի է ունեցել բովանդակային խզում միջազգային հարաբերությունների համակարգում. եթե նախկինում միջազգային խաղի կանոնները որոշում էին ուժերի հավասարակշռությունը, հետագայում «ազդեցության գոտիներ»-ի հայեցա-

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T5F218 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

կարգը, միջազգային իրավունքը ու միջազգային կազմակերպությունները, սպա այսօր ուժը գործնականում դարձել է այն միակ գործոնը, որ պայմանավորում է միջազգային հարաբերությունների համակարգում այս կամ այն պետության տեղն ու դերը, դիրքն ու ազդեցությունը: Միջազգային իրավունքը, խաղաղության ապահովման ու ուժային հավասարակշռություն ձևավորելու առաքելությամբ միջազգային կազմակերպությունները ինչպես լեգիտիմության, այնպես էլ իրական ազդեցության մասով իրենց տեղը զիջել են կոնկրետ պետություններին, անդրազգային կազմակերպություններին ու ռազմաքաղաքական դաշինքներին: Այս համատեքստում տրամաբանական է գլոբալ անկայունության աճը, որի ամենից վաղ դրսևորումը Արևմուտք – ՌԴ առճակատումն է, որն իր բնույթով ու կողմերի հռետորաբանությամբ ավելի վտանգավոր է, քան 1962 թ. Կարիբյան ճգնաժամը: Այս առճակատման պայմաններում կողմերից որևէ մեկը կարծես կաշկանդված չէ սպառազինությունների վերահսկման ու զսպման որևէ պարտավորությամբ, քանի որ ոչ հեռու անցյալում կա՛մ սատեցրել կա՛մ չեղարկել են նախկինում ստորագրված սպառազինությունների և միջուկային զենքի կրճատման ու վերահսկման գրեթե բոլոր պայմանագրերը: Ավելին՝ տեսանելի չէ ուկրաինական ճգնաժամը հանգուցալուծելու Արևմուտքի գործնական ցանկությունը, մյուս կողմից՝ տեսանելի են ՌԴ-ի հետևողական քայլերը այդ ճգնաժամում իր հոչակած նպատակներին (դենացիֆիկացում և դեմիլիտարացում) հասնելու ուղղությամբ, որը գործնականում ՌԴ-ի համար դարձել է գոյության լեգիտիմ իրավունքի հիմնավորում:

Միջազգային աշխարհաքաղաքական «կլիման» ներկայումս պայմաններ է ստեղծում, որ աշխարհի ամենատարբեր տարածաշրջաններում փոխվեն ուժային հավասարակշռության գործող համակարգերը, որոնք միջպետական հարաբերություններում օբյեկտիվորեն հանգեցնում են լարվածության աճի, դաշնակցային հարաբերությունների վերագնահատման, արտաքին քաղաքական նոր գործընկերներ գտնելու, երբեմն նոր դաշնակցային պակտեր կնքելու քայլերի, նոր իրավիճակին համապատասխան արտաքին քաղաքականության առաջնահերթությունների հստակեցման:

Վերոնշյալ իրողությունները հատկապես ռիսկային ու անկանխատեսելի հետևանքներ են ունենում փոքր ու թույլ ռեսուրսապահովվածությամբ պետությունների համար, քանի որ վերջիններս նոր պայմաններում ոչ միշտ են կարողանում առավել զգույշ ու հաշվենկատ ձևակերպել իրենց ազգային շահերը՝ փորձելով իրատեսական դիրքերից հարաբերվել ուժային կենտրոնների, ավանդական գործընկերների ու պատմական հակառակորդների հետ: Սա առանձնապես վերաբերում է Հվ. Կովկասի տարածաշրջանի երկրներին, որտեղ 2020-ի պատերազմից հետո ուժային խախտված հավասարակշռության կայունացում դեռևս տեղի չի ունեցել և հատկապես ՀՀ-ին, որը ոչ միայն գոյու-

թենական ու պետականագրկման խնդիրների առջև է այսօր կանգնած, այլև խորքային առումով չի կարողանում ձևակերպել իր ազգային շահերին համապատասխան մոտեցումներ: Ուստի կարևոր ենք համարում տարածաշրջանում դեռևս չձևավորված աշխարհաքաղաքական խաղի կանոնների ու ուժային հավասարակշռության պայմաններում դիտարկել ՀՀ-ի՝ որպես փոքր պետության գոյության ու անվտանգության ապահովման առաջնահերթությունները դաշնակցային ու արտաքին քաղաքական նոր միտումների ներքո: Այս համատեքստում կկենտրոնանանք մի խումբ խնդիրների ու առաջնահերթ քայլերի վրա, որոնք փոքր պետությունը պետք է ձեռնարկի գոյաբանական ու անվտանգային իր գերակայություններն ապահովելու համար:

Պետությունների անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրիչը իրենց տիրապետման տակ առկա ռեսուրսների ու միջավայրային գործոնների շրջանակում շահերի, ազգային նպատակների իրատեսական ձևակերպումն ու ուղենշումն է: Այս պարագայում հատկապես կարևոր է պետական իշխանության մարմինների և հանրության՝ քաղաքականապես ակտիվ և պատասխանատու շրջանակների կողմից ազգային շահերին համակարգային և հայեցակարգային ձևակերպում տալը, որը պետք է հանրագումարի ինչպես անհատի և հանրության օբյեկտիվ շահերն ու պահանջմունքները, այնպես էլ պետության անվտանգության ու զարգացման կարիքները: Նշենք, որ այս պայմաններում կարևոր են ոչ միայն այդ շահերի ողջամիտ ու հստակ արժևորումը, նրանց սպառնացող վտանգների վերհանումը կամ սպառնացող անվտանգության ռիսկերի հստակեցումը, այլև ռեսուրսների և միջոցների այն հանրագումարի որոշակիացումն ու հավաքագրումը, որոնք անհրաժեշտ են ազգային շահերի ապահովման և իրացման համար: Այս առթիվ ամերիկյան քաղաքական ռեալիզմի դպրոցի հիմնադիր հայրերից մեկը՝ Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր **Հանս Մորգենթաուն**, նշում էր. «Ազգային շահի ամբողջական հայեցակարգի սահմանման կարևոր քայլերից է ազգային շահի ապահովման համապատասխան գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ուժային ռեսուրսների հավաքագրումը, որը պայմանավորում է ազգային շահի հայեցակարգում շահերի իրականացման հնարավորությունները, այն է՝ նրանց իրատեսականության աստիճանը»¹: Եթե «ազգային շահեր – իրացման միջոցներ» հարթության մեջ առկա է անհամամասնություն ոչ հօգուտ պետության ներուժի, ապա դա կարող է անիրականանալի դարձնել պետության նպատակների իրագործումը, քանզի ռեսուրսների ոչ իրատեսական գնահատումը «դատապարտում» է ազգային շահերի վրա հիմնված պետական քաղաքականությունը: Այս պայմաններում, մեր կարծիքով, պետության զարգացման ընդհանուր ռազ-

¹ **Hans Morgenthau**, In Defence of the National Interest, 4th ed. New York: Alfred A. Knopf, 1951, p. 117-118.

մավարությունը և մասնավորապես նրա անվտանգության բաղադրատարրերը պետք է հիմնվեն պետության ռեսուրսային ներուժի, ինչպես նաև ազգային շահի ծավալային ընդգրկունությունը կանոնակարգող զսպանակների և սահմանափակիչների համապատասխան համակարգի վրա: Սակայն երբ «առաջադրվող նպատակներ - առկա ռեսուրսներ» հարաբերակցությունն այլ բնույթ է կրում, և գերակայում են ռեսուրսները, ապա պետական քաղաքականության տարածական ուղեգիծը դառնում է ավելի ընդգրկուն, իսկ հավակնությունները՝ ավելի մեծ: Սա բավարար հիմք է պնդելու, որ ազգային շահերի սահմանափակման կամ նրա միջակայքի ընդլայնման առաջնային ցուցանիշն ազգային շահի սուբյեկտի ներուժի և հզորության ընդհանուր բնութագիրն է:

Այս պարագայում, մեր կարծիքով, հարկ է արձանագրել, որ հզորությունը և մասնավորապես պետության հզորության համակարգն առնչվում է ինչպես պետությունների միջև ցանկացած բնույթի ռեսուրսների որոշակի բաշխման և նրանց կիրառման կարճաժամկետ հնարավորություններին, այնպես էլ պետությունների կողմից նրանց կիրառման հետևանքների վերաբերյալ երկարաժամկետ կանխատեսումներին²: Լինելով բավականին ընդգրկուն և բազմամակարդակ հասկացություն՝ պետության հզորության համակարգը պարունակում է միջոցների և բաղադրատարրերի այնպիսի հանրագումար, որն անհրաժեշտ է ազգային շահերի իրացման գործողություններ ձեռնարկելու համար: Կառուցվածքային տեսանկյունից այդ համակարգն ամբողջացնում է ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից առավել ներկայացուցչական ցուցանիշների ելակետային մի հավաքանի՝ կազմված նյութատնտեսական հզորությունները և «մարդկային» ներուժը, ազգաբնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակն ու կազմակերպչական հմտությունները, պետության ռազմաքաղաքական հզորության գործակիցն ու արտաքին քաղաքական գերակայությունները բնութագրող հիմնական խումբ ցուցանիշներից: Այսինքն՝ պետության հզորության համակարգը ներկայանում է որպես նրա «նյութական և հոգևոր ուժերի այնպիսի ամբողջություն», որը հնարավոր արտակարգ իրավիճակի կամ անգամ պատերազմի պարագայում հաղթանակի ապահովման նպատակով հանրագումարում է պետության, հանրության և զինուժի առկա ու հավաքագրված հնարավորությունները³: Այս հանրագումարը գործարկման ենթակա է միայն տնտեսական և ռազմական հավաքագրման հատուկ պայմաններում՝ հանրության և պետության բոլոր ռեսուրսների առավելագույն

² Այս տեսանկյունից, մեր կարծիքով, իրավացի են Ռ. Բուրդյուրը և Ֆ. Բորիկադը՝ նշելով, որ «հզորություն/ներուժ» հասկացությունը առնչվում է ինչպես պետության մարտավարությանը, այնպես էլ՝ ռազմավարությանը, ուստի առկա մոտեցումները պետք է համադրվեն (առավել մանրամասն տե՛ս **Raymond Boudon and Francois Bourricaud. A Critical Dictionary of Sociology, Chicago, 1989, էջ 267**):

³ Տե՛ս «Военный энциклопедический словарь», М., 1983, էջ 581:

լարման իրավիճակում: Այսինքն՝ պետության ռազմավարական հզորության համակարգը տվյալ իրավիճակում և հեռանկարում ազգային անվտանգության ապահովմանն ուղղված՝ պետության, հանրության և զինուժի նյութական ու հոգևոր միջոցների ամբողջությունն է:

Կարևորելով յուրաքանչյուր կառուցատարրի դերակատարումն ազգային շահերի և ազգային անվտանգության ապահովման քաղաքականության համատեքստում՝ նշենք, որ քաղաքակրթական և տեխնոլոգիական փոխակերպումների մերօրյա իրողությունների պայմաններում նշյալ ցուցանիշների մեջ առանձնահատուկ տեղ ու դեր ունի հատկապես պետության ռազմաքաղաքական հզորության գործակիցը⁴, որի արտաքին քաղաքական բաղադրիչն ամփոփում է հետևյալ հիմնատարրերը. ազգային շահեր + արտաքին քաղաքական ռազմավարություն +/- արտաքին քաղաքական միջավայրային գործոնների համակարգ (տե՛ս աղյուսակը):

Աղյուսակ

Գործակիցներ	Ինդեքսներ
Ազգային շահեր	- ազգային շահերը ներառում են օբյեկտիվ և սուբյեկտիվ պահանջումների բավարարման անհրաժեշտությամբ պայմանավորված գիտակցական նպատակների ամբողջական համակարգը
Արտաքին քաղաքական ռազմավարություն	- արտաքին քաղաքական ռազմավարությունն ամբողջացնում է ազգային շահերի իրացմանն ուղղված ռազմավարական և մարտավարական մեխանիզմները
Արտաքին քաղաքական միջավայրային գործոններ	- արտաքին քաղաքական միջավայրային գործոնների համակարգը հանրագումարում է սահմանակից հարևանների հետ հարաբերությունների բնույթի նկարագիրը, երկկողմ կամ բազմակողմ դաշնակցային հարաբերությունները, նրանց խորությունն ու համաչափությունը, երկրի տարածքում օտարերկրյա ռազմական ստորաբաժանումների և կառույցների առկայությունը կամ բացակայությունը, դրանցով պայմանավորված առավելությունները և սահմանափակումները, հարաբերությունները տարածաշրջանային և համաշխարհային ռազմաքաղաքական դաշինքների հետ և այլն:

⁴ Այլ մտածողներից գատ, ռազմաքաղաքական հզորության առանձնահատուկ դերակատարման մասին է խոսել Հ. Մորգենթաուն. «Չնայած պետության հզորության համակարգը դիտարկելիս կարևոր է աշխարհագրության, բնական ռեսուրսների, արդյունաբերական հնարավորությունների, ազգաբնակչության, ազգային բնավորության, «ազգային բարոյականության», դիվանագիտության և «կառավարության որակների» դերակատարումը, սակայն երբ առաջ են գալիս ռազմաքաղաքական հարաբերակցության հիմնախնդիրը և պետության հզորության կարևորագույն տարր ներկայանում է նրա ռազմաքաղաքական ցուցանիշը» (**Hans Morgenthau**, նշվ. աշխ., էջ 106-158): Նմանօրինակ կարծիք է հայտնում նաև Ք. Ուոլթսը. «Պետության հզորության համակարգում պետք է հատկապես հաշվի առնվեն բնակչության քանակը, տարածքի մեծությունը, ռազմական ուժերը և քաղաքական կայունությունը» (**Kenneth N. Waltz**, *Theory of International Politics*, Reading, MA: Addison-Wesley, 1979, p. 131):

Ռազմաքաղաքական հզորության՝ արտաքին քաղաքական ներկայացված բաղադրիչների հիմքով կարելի է փաստել, որ տարածաշրջանային քաղաքական իրողություններին համապատասխան Հայաստանը մինչև 2018 թ. փորձում էր որոշակի հավասարակշռություն ապահովել ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ռազմաքաղաքական շփումների ոլորտում՝ այդ կերպ զուգորդելով իր հիմնական՝ եվրասիական և եվրատլանտյան ուղղությունները: Իրավիճակը փոխվեց 2018-ից հետո, երբ քաղաքական նոր թիմը, որ աչքի էր ընկնում անփորձությամբ և ամբոխահաճո հոետորաբանությամբ, նախ՝ ՀՀ Ազգային անվտանգության նոր ռազմավարություն մշակեց, ապա արտաքին քաղաքականության մեջ ՌԴ-ն հռչակելով ՀՀ-ի ռազմավարական առանցքային դաշնակից (որի հետ հարաբերությունների որակը, ըստ իրենց, պատմական ամենից բարձր նշաձողի վրա էր)՝ սկսեց ակտիվ առարկայական քայլեր ձեռնարկել Արևմուտքի ու ԱՄՆ-ի հետ շփումների համակարգային խորացման ուղղությամբ: Քաղաքական գործընթացների տրամաբանությունը այս փուլում հանգեց նրան, որ արտաքին քաղաքական գործընկերների շրջանում հայկական մոտեցումների նկատմամբ անընկալելիություն ձևավորվեց, որ պայմանավորված էր պաշտոնական Երևանի դիրքորոշման պարբերական փոփոխությամբ ու կտրուկ շրջադարձերով: Դա, իհարկե, տարաբնույթ հետևանքներով հղի իրավիճակ էր, որ ազդեց արտաքին քաղաքական գործընկերների հետ շփումների որակի ու խորության, փոխվստահության մթնոլորտի մաշեցման վրա, որն առավել սուր դրսևորվեց 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության ստորագրումից հետո: Բանավոր քննարկումներն ու հանձնառությունները, որ պաշտոնական Երևանը դարձրեց նոր ժամանակների իր դիվանագիտության գործիքներից մեկը, բավականին խնդրահարույց իրավիճակներ ստեղծեցին ՀՀ-ի համար՝ ոչ նպաստավոր պայմաններ ստեղծելով ՀՀ-ի և Արցախի ազգային շահերի ապահովման տեսանկյունից: Նոր պայմաններում, երբ 2020 թ. պատերազմի արդյունքում խախտվեց Հարավային Կովկասի ուժային հավասարակշռությունը, նման դիրքորոշումը նոր ռիսկեր ծնեց ՀՀ-ի և Արցախի ապագայի համար, որոնք մինչ օրս դեռևս չեն չեզոքացվել:

Անդրադառնալով պետության ռազմաքաղաքական հզորության բաղադրատարրի **ռազմական բաղադրիչին**՝ հարկ է նշել, որ այն բավականին ընդգրկուն ցուցանիշ է, որի մեջ ընդգրկվում են պետության զինուժի նյութական ու ոչ նյութական բոլոր տարրերը, ղեկավարության կազմակերպչական և կառավարչական ունակությունները, պետության պաշտպանական քաղաքականության դոկտրինալ և փաստաթղթային ողջ համակարգը և շատ այլ տարրեր: Ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմական իրավիճակում պետությունը սովորաբար չի սահմանափակվում ուժի միայն մեկ բաղադրատարրի կիրառմամբ: Կառավարության տրամադրության տակ կան տարբեր բա-

ղաղբիչներ (ՀՀ-ի պարագայում «ուժի» տարբեր բաղադրատարրերի շարքում առանձնակի կարևորություն ունեն հայկական սփյուռքի, որակյալ գիտական ներուժի և այլ գործոնները), որոնք սովորաբար կիրառվում են այս կամ այն համակցությամբ: Պետության ռազմական հզորության՝ զինուժի և նրա նյութատեխնիկական զինանոցի հավաքագրման հնարավորությունները պայմանավորվում են աշխատուժով, պետության հողային ֆոնդերով, արդյունաբերական պոտենցիալով և այլ ռեսուրսներով: Ակնհայտ է, որ պետության ռազմական հզորությունը պետք է գործարկվի իր տիրապետման տակ գտնվող ռեսուրսների հիմքով: Հետևապես պետության տնտեսական հզորության մեծությունը և որակական ցուցանիշներն այն հիմնական գործոններն են, որ կանխորոշում են ռազմական պոտենցիալի բնույթը: Այս պարագայում ռազմական հնարավորությունները երկրի ազգաբնակչության թվի և կառուցվածքի, տարածքի և բնական պաշարների, տնտեսական և տեխնիկական զարգացածության ցուցանիշ հանդիսացող արդյունաբերական ուժերի հզորության հավաքական արտացոլումն են: Նմանօրինակ բազամակարդակ կառուցակազմ ունեցող համակարգը բավականին բարդ է գնահատել. դժվար է կանխավ որոշել՝ որ գործակիցներն են առանցքային: Պետության ռազմական պոտենցիալի գնահատման ժամանակ սխալականության աստիճանը հնարավոր է նվազեցնել համեմատության ժամանակ կիրառելի փոփոխականների թվի նվազեցման կամ փոփոխականների մեջ ոլորտին վերաբերող տարաբնույթ ցուցանիշներ և ինդեքսներ ամբողջացնող գործակիցների մշակման միջոցով: Պետությունների ռազմական հզորությունների համեմատության ցուցանիշների շարքում որպես այդօրինակ հիմնական գործոն դիտվում են զինուժը և հատկապես նրա որակաքանական բնութագիրը: Զինուժի սպասարկումը պահանջում է տնտեսական խոշորածավալ ծախսեր, ինչը հանգեցնում է նյութական զոհաբերությունների և որպես դրանց արձագանք՝ երբեմն նաև սոցիալական սուր դժգոհությունների: Մեծաքանակ զինուժի ստեղծման և սպասարկման ծախսերը սովորաբար աճում են աստիճանաբար և այդ պատճառով քիչ նկատելի են: Նրանց հեռանկարային հետևանքը, իհարկե, եթե պետությունը չունի իրական հակառակորդներ, այն է, որ ռազմուժի և նրա ծախսերի ավելացումը ի վերջո հանգեցնելու է պետության ռազմավարական հզորության թուլացման: Մեծաքանակ զինուժի ստեղծումն ու սպասարկումը բացասաբար են անդրադարձնում պետության տնտեսության վրա. նվազում են ներդրումները դեպի արդյունաբերություն, ենթակառուցվածքների զարգացում՝ հանգեցնելով պետության ռազմական ներուժի առավել դանդաղ ընթացքի: Գործնական արդյունավետության տեսանկյունից անօգուտ է խաղաղ պայմաններում պահել զինուժի այնպիսի քանակ, որն անցնում է անհրաժեշտ սահմանը: Սահման, որը որոշակիանում է ինչպես սեփական պետության կարիքների

ապահովման, այնպես էլ անմիջական հարևանների զինուժի քանակի հաշվառման և համադրման արդյունքում: Հետևաբար հանգում ենք այն եզրակացության, որ ռազմական ներուժի վերածումը հավաքագրված զինուժի, եթե այն անցնում է պետության համար անհրաժեշտ հաստատված սահմանագիծը, բացասաբար է անդրադառնում պետության հավաքական հզորության ողջ գործակցի վրա: Այդ սահմանագիծը պայմանավորում է ռազմական հզորության ներուժի և հավաքագրված զինուժի միջև նորմալ հարաբերակցությունը, որի նույնիսկ մոտավոր ձևորոշումը բավականին բարդ է, հատկապես եթե հաշվի առնենք ժամանակային կոնկրետ հատվածում խաղաղության «ամրության» գնահատման իրական և ճշգրիտ հնարավորությունները: Տեսնելով այլ պետություններում զինուժի քանակի ավելացումը ու որակի բարձրացումը, չցանկանալով ռիսկի դիմել՝ կառավարությունները հաճախ ավելացնում են սեփական ռազմական ծախսերը: Նման իրավիճակում հատկապես կարևոր է պետության՝ սեփական ռազմական ներուժն իրական ուժի վերածելու ունակությունները: Որքան մեծ են դրանք, այնքան նվազ է խաղաղ պայմաններում հնարավոր հակառակորդի կողմից հաստատված հավասարակշռությունը անցնելու ռիսկը: Հետևաբար, այլ գործոններից զատ, զինուժի քանակը կախված է նաև այն բանից, թե որքան ֆինանսներ է պետությունն ունակ հատկացնելու բանակին: Եթե «անհրաժեշտի» և «հնարավորի» միջև առկա է տարբերություն, արտաքին քաղաքականության նպատակներն անհրաժեշտ է համապատասխանեցնել նրանց իրականացման համար անհրաժեշտ միջինացված չափագծին, քանզի հակառակ դեպքում իրական միջոցների անբավարարության պատճառով արտաքին քաղաքականությունն անհաջողության կմատնվի:

Ակնհայտ է, որ պետության ռազմական հզորության գործնական գնահատման լավագույն ցուցանիշը, ռազմական գործողություններն են: Անկասկած, զինված ուժերի քանակական ցուցանիշների, կառուցվածքային և կազմակերպչական հատկանիշների, զինապարտության բնույթի, տարիքի, զինծառայության ժամկետի, զինապարտ բնակչության թվաքանակի, պրոֆեսիոնալ բանակի առկայության կամ բացակայության, զինված ուժերի տեխնիկական համալրվածության, նրա արդիականության մակարդակի, քանակական ցուցանիշների, պետության ռազմական բյուջեի և զինտեխնիկայի արտահանման կամ ներմուծման ծախսերի չափով, զինված ուժերի սպայական կազմի քանակով կարելի է որոշել պետությունների ռազմական հարաբերակցությունը, սակայն առանց որակական գնահատականի համեմատությունը լիարժեք չի կարող լինել:

Ռազմական հզորությունների մասով մինչև 2018 թ. ՀՀ քաղաքական և ռազմական ղեկավարությունը պետական և ազգային անվտանգության ապահովման համար նպատակահարմար էր գտնում ստեղծել քանակական և որակական խիստ որոշակի համադրումից ածանցվող

«հավասարակշռված զինուժ և ռազմական հզորություններ», որոնք, իրենց հիմքում ունենալով պետության տարածական, տնտեսական և ազգաբնակչության, հոգևոր և քաղաքական ներուժի ամենից արդյունավետ համադրումը, պետք է առավելագույնս լավ պատրաստված լինեն՝ հնարավոր պատերազմական պայմաններում կարողանալով ապահովել ՀՀ անվտանգությունը:

2018 թ.-ից հետո ՀՀ զինված ուժերի կառուցվածքային ու գործառնական նախկին մոդելը փոխվեց: Ամենից լուրջ բովանդակային ամենակարևոր փոփոխությունը այն էր, որ Արցախի անվտանգության ապահովման հարցը դուրս բերվեց ՀՀ զինված ուժերի առջև դրված խնդիրների ցանկից: Ներկայումս ՀՀ զինված ուժերի ռազմավարական ու մարտավարական կառուցվածքի կազմակերպման տրամաբանությունը առավելապես տեղային է և որևէ կերպ չի տեղավորվում ռազմական պլանավորման և պետության անվտանգության համակարգային ապահովման համալիր հայեցակարգի մեջ: Ոչ միայն նպատակներն են անորոշ ու իրավիճակային, այլև դրանց հասնելու ուղիները, անձնակազմի կարողունակությունը և տեխնիկական անհրաժեշտ պայմանների ապահովումը: Մեծ հաշվով բավականին բարդ է հասկանալ ու ըմբռնել, թե ՀՀ ներկա պետական իշխանության ռազմական քաղաքականության հիմքում ի՞նչ բնույթի զինված ուժեր ձևավորելու ու կայացնելու հարացույց է դրված, որը ունակ կլինի ապահովելու ՀՀ անվտանգությունը:

Տարածաշրջանային ուժային հավասարակշռության փոփոխման պայմաններում փոքր պետությունների սեփական ազգային շահերը վերախմբագրելու առումով կարևոր է, որ այդ գործընթացը ձեռնարկվի ու իրականացվի **անվտանգային ռիսկերի** համակարգի հաշվառմամբ: Հենց այդ համատեքստում ՀՀ-ն պետք է ըստ իրատեսականության աստիճանի ուղենշի անվտանգային իր ռիսկերի հասանելի ու կանխատեսման ենթակա միջակայքը, ապա ըստ դրա փորձի գտել ու ձևակերպել առավել ու պակաս իրատեսական շահերի շրջանակը, անհրաժեշտ ռեսուրսների ծավալը: Իրենից ներկայացնելով ռեսուրսների հնարավոր կորստի հարաբերակցությունը նպատակների իրականացման համար անհրաժեշտ առկա ռեսուրսների նկատմամբ ռիսկայնության գործոնը կարևոր է պետության ռազմաքաղաքական հզորության որոշման տեսանկյունից: Այն հնարավորություն է տալիս որոշելու նրա մեջ ցուցանիշների հաշվառման վերջնարդյունքի անխուսափելի տատանման աստիճանը: Այսինքն՝ ռիսկի քանակական գնահատումը հավանականության և ոչ ցանկալի հնարավոր գործընթացների հետևանքների թվային կամ գործակցային գնահատում/չափում է:

Առհասարակ սոցիալ-քաղաքական ու միջազգային համակարգերում ցանկացած ռիսկ կապված է համակարգի, պետության անվտանգության ու զարգացման հետ և ենթադրում է որոշակի գործոնների հնարավոր ազդեցության կամ դրա բացակայության վիճակ համակարգի

անվտանգության բնականոն գործընթացի ապահովման ու կանախատեսելի զարգացման վրա: «Ռիսկ» հասկացության բնորոշումը ուղղակիորեն կապված է «սպառնալիք/վտանգ» հասկացությունների հետ: «Սպառնալիք» եզրը նեղ առումով «վնասող գործողություն» է, լայն իմաստով՝ ցանկացած հանգամանք, որը կարող է «վնասել, կորուստներ պատճառել կամ բացասական իրավիճակ ստեղծել»⁵: Ըստ ռիսկերի տեսաբան Բ. Դասսի՝ սպառնալիքները գոյություն ունեն այն դեպքում, երբ մի պետությունը այլ պետության կամ նրանց խմբի մոտ արձանագրում է հակադիր շահեր, մտադրություններ, դրանց իրականացման գործողություններ, ինչպես նաև այդ շահերի ապահովման համար անհրաժեշտ հզորություններ⁶: Այսինքն՝ ռիսկը սպառնալիքի հնարավոր առկայությունն է նրա գործընթացային դինամիկայի մեջ, որը կարող է վնասել/չվնասել պետությանը: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ ռիսկը «անցանկալի արդյունքների հավանականության և ազդեցության չափում»⁷ է, որտեղ գլխավոր բաղադրիչը «անորոշություն» եզրույթն է, քանզի եթե գործողության հետևանքները կախված են որոշակի հնարավոր իրադարձություններից, ապա նման գործողությունները բնորոշվում են որպես ռիսկային, որովհետև կանխավ բարդ է գուշակել, թե կունկրես իրադարձությունը տեղի կունենա՞, թե՞ ոչ⁸: Այս համատեքստում կարող ենք արձանագրել, որ պետության համար ռիսկը անորոշության բաղադրիչ ենթադրող, կողմերի խոցելիության հանգամանքով պայմանավորված իրավիճակային այնպիսի զարգացում կամ զարգացման հնարավորություն է, որի դեպքում կարող են վտանգվել պետության անվտանգությունը, զարգացման հնարավորությունը: Ռիսկերի որոշակիացումը և դրանց արձագանքելը հատկապես կարեւոր է իրագործել պետության անվտանգային քաղաքականության մեջ, հակառակ դեպքում դա կարող է հանգեցնել պետության պաշտպանվածության մակարդակի թուլացման: Սա է պատճառը, որ այսօր անվտանգային քաղաքականությունը վերածվել է ոչ այնքան վտանգների արձագանքելու, որքան ռիսկերը կանխատեսելու ու կառավարելու քաղաքականության:

ՀՀ-ի պարագայում անվտանգային ռիսկերի դիտարկման ու գնահատման առումով առաջնային ցուցիչը ռազմականն է (առկա են նաև քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական ռիսկերի տարատեսակներ), որը իր հերթին բաղկացած է բազմամակարդակ ու բազմատարր գործակիցներից: Ռազմական ոլորտում ուժերի հարաբերակցության և

⁵ **Carl Young**. Metrics and methods for security risk management. Elsevier inc 2010, p. 20.

⁶ Տե՛ս **Christopher Daese**. International risks and the perils of proactive security policy. (Paper prepared for the six pan-European International Relation Conference) Turin, 12-15 September, 2007, էջ 10:

⁷ **Lowrance WW**. Of acceptable Risk. Los Altos, CA: William Kaufman, 1976// Yacow Haimes, On the complex definition of risk: a systems-based approach. Risk analysis, Vol 29, No 12, 2009, p. 1647.

⁸ Տե՛ս **John Copas**. “Statistical modeling for risk assessment”. Risk management. Vol. 1, No 1, 1999, էջ 35:

դրա դինամիկայի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել կառուցվածքային մի շարք չափումներ, որոնք են՝ զինված ուժերի քանակը, սպառազինությունների քանակական ու որակական ցուցիչները, ռազմական ոլորտի ծախսերը, մարտունակության աստիճանը և այլն: Ռազմական կարողության գնահատման ամենից ընդհանուր չափումը պետության զինված ուժերի (ԶՈՒ) քանակն է: Ըստ 2022 թ. հրապարակված տվյալների՝ ՀՀ զինված ուժերը կազմում են 42 900, Արցախինը՝ 5 հազ., Ադրբեջանինը՝ 66 950 մարդ⁹:

Ռազմական հարաբերակցության գնահատման հաջորդ կարևոր չափումը կողմերի ԶՈՒ-ում սպառազինությունների վիճակն և հարաբերակցությունն է հնարավոր հակառակորդի սպառազինությունների հետ: Զինված ուժերում որոշել կողմերի սպառազինության տեսակները և չափը բարդ է, եթե չասենք՝ անհնար: Որպես կանոն՝ այս պարագայում անհրաժեշտ տեղեկատվության հիմնական աղբյուր են միջազգային թեմատիկ զեկույցները¹⁰, մամուլը, ՄԱԿ-ի սպառազինությունների շրջանառությունը կանոնակարգող փաստաթղթերը¹¹, պաշտոնական հայտարարությունները և երբեմն էլ «մասնավոր» բնույթի տեղեկատվությունը: Այս տեսանկյունից վերլուծություն անելիս պարզ է դառնում, որ ՀՀ-Ադրբեջան զինված ուժերի հարաբերակցության մեջ անվտանգային ռիկերի տեսանկյունից ունենք հետևյալ իրավիճակը.

- Կողմերի զինտեխնիկայի զգալի մասը ռուսական է, որը փաստում է՝ կողմերի սպառազինությունների հարաբերակցությունը կառավարելի է տարածաշրջանային տերության կողմից: Միաժամանակ, 2020 թ. ռազմական գործողությունների ընթացքում կողմերը մեծ թվով տեխնիկա են կորցրել: Նշենք, որ Ադրբեջանը, ՌԴ-ից գատ, վերջին շրջանում էլ ավելի է սերտացրել իր ռազմատեխնիկական գործակցությունը Իսրայելի հետ, իսկ Թուրքիայի հետ սոսկական ժամանակ ռազմատեխնիկական միջոցներ է արտադրում:

- Երկու կողմերն էլ ունեն ինչպես պաշտպանողական, այնպես էլ հարձակողական զինանոց, որի միջոցով կարող են խոցել հակառակորդի՝ շփման գծին մերձակա, ինչպես նաև խորը թիկունքում տեղակայված օբյեկտներ և կենդանի ուժ¹²:

- Ռազմական ցուցիչում կարևոր չափում է ռազմական հատկացումների չափը: Ներկայումս ՀՀ-ն ռազմական կարիքների համար 2023-ի իր բյուջեում նախատեսել է ծախսել 1,252 մլրդ \$, Ադրբեջանը՝ 3,13 մլրդ¹³: Անկախությունից ի վեր ռազմական ոլորտում ՀՀ-ի և Ադր-

⁹ Տե՛ս «The Military Balance 2022», iiss.org, էջ 175-185:

¹⁰ Տե՛ս «Military Balance report», «SIPRI Arms Transfers Database», «Janes world armies» և այլն:

¹¹ Տե՛ս «The Global Reported Arms Trade», The UN Register of Conventional Arms.

¹² Այս մասին առավել մանրամասն տե՛ս «The Military Balance 2022», նշվ. էջեր:

¹³ Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտական ինստիտուտի բազայից, <http://www.sipri.org/databases/>:

բեջանի ընդհանուր ծախսերը կազմում են՝ համապատասխանաբար 5,294 և 22,73 մլրդ \$¹⁴: Այսինքն՝ Բաքուն մոտ 4,29 անգամ ավել միջոցներ է հատկացրել ռազմական ոլորտին, քան Երևանը: Թեև փորձագիտական շրջանակներում կարծիք կա, թե Ադրբեջանում կոռուպցիայի հետևանքով ռազմական ոլորտի հատկացումներն օգտագործվում են ցածր արդյունավետությամբ, սակայն անգամ այս պարագայում ակնհայտ է, որ նման դինամիկայի դեպքում քանակական առավելությունը ինչ-որ մի կետից հետո որակականի փոխվելու մեծ ռիսկ է պարունակում: Հարկ է նշել, որ անվտանգային նման ռիսկի կառավարումը ՀՀ-ն փորձում է իրականացնել միջպետական համաձայնագրերով ստացվող զինատեսակներով՝ որպես ՀԱՊԿ անդամ երկիր օգտվելով ՌԴ-ից տրամադրվող վարկային միջոցներով ներքին գներով սպառազինություններ ձեռք բերելու ֆինանսական արտոնություններից:

Տարածաշրջանային ուժային հավասարակշռության փոփոխման ու նորի ձևավորման պայմաններում փոքր պետությունները, բացի ազգային շահերի վերախմբագրումից, դրանց համար անհրաժեշտ ներուժի կուտակումից, դրա մեջ ռազմաքաղաքական բաղադրիչի կարողունակության մեծացումից, պետք է հստակեցնեն ու մշակեն, թե նոր պայմաններում անվտանգային ինչ **հարացույցի** ներքո են ապահովելու սեփական պետության անվտանգային քաղաքականությունը, որը մի կողմից ամփոփում է սեփական ռազմական քաղաքականության հիմնական սկզբունքները, մյուս կողմից դաշնակցային հարաբերություններով պայմանավորված փոխհարաբերությունները, դրանց փոխակերպումները, վերագնահատումը:

Դիտարկելով ՀՀ ռազմավարական մի շարք փաստաթղթեր՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման հարացույցը կազմված է անհատական և **«հավաքական անվտանգության»** գործիքակազմով սեփական երկրի անվտանգությունը ապահովելու թեզերից: Հավաքական անվտանգության մոտեցումը ՀՀ ռազմական քաղաքականության մեջ արտահայտվում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը ՀՀ-ի անդամակցությամբ և ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործակցության գործողությունների ծրագրի սահմանափակ շրջանակներում համագործակցությամբ:

Հայեցակարգային առումով ՀԱՊԿ-ի գործունեությունն ածանցվում է «հավաքական անվտանգության» սկզբունքից, համաձայն որի՝ դաշինքի անդամ երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ ագրեսիայի ցանկացած դրսևորում (այդ թվում՝ ռազմական հարձակումը) դիտարկվում է որպես հարձակում ողջ դաշինքի վրա, հետևաբար դաշնակիցները պարտավորվում են հնարավոր բոլոր, այդ թվում ռազմական միջոցների ներգրավմամբ համատեղ քայլեր ձեռնարկել՝ հակադարձելու

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

ընդհանուր սպառնալիքին: Նշյալ մոտեցումը արտացոլվում է ՀԱՊԿ հիմնարար փաստաթղթում հայեցակարգային հետևյալ դրույթներում¹⁵.

1. «...խորհրդակցել միմյանց հետ միջազգային անվտանգության կարևոր այն հարցերի շուրջ, որոնք կապված են իրենց շահերի հետ՝ համաձայնեցնելով դրանց վերաբերյալ առկա մոտեցումները: Կազմակերպության անդամ երկրների անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը, ինքնիշխանությանն ուղղված սպառնալիքների ի հայտ գալուն պես անհապաղ գործարկել համատեղ խորհրդակցությունների մեխանիզմները առկա դիրքորոշումները համաձայնեցնելու, առաջացած սպառնալիքի վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու նպատակով»¹⁶:

2. «Եթե անդամ երկրներից որևէ մեկն այլ պետության կամ պետությունների խմբի կողմից ենթարկվում է ագրեսիայի, ապա դա կազմակերպության անդամ մյուս բոլոր երկրների կողմից դիտվում է որպես ագրեսիա բոլորի դեմ: Կազմակերպության որևէ անդամի՝ ագրեսիայի ենթարկվելու պարագայում դրան ենթարկվողն ի կատարումն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության «հավաքական ինքնապաշտպանության մասին» 51-րդ հոդվածի կարող է, այդ թվում, նաև ռազմական օգնություն ստանալ գործընկերներից, եթե նման խնդրանքով դիմի վերջիններիս»¹⁷:

ՀԱՊԿ-ը ֆորմալ ու հայեցակարգային առումով հավաքական անվտանգության դասական համակարգ է, որն առաջնորդվում է «հավաքական անվտանգության» սկզբունքով: Քաղաքական առումով այն կոմունիստական ընդհանուր ժառանգության կրող, ներկայումս աշխարհաքաղաքական իրողություններում ներգրավվածության տարբեր աստիճան ու ձև ունեցող երկրների ամբողջություն է, որն անվտանգության ապահովման օրակարգի ձևավորման առումով ունի բավական լայն ու դեռևս ոչ լիարժեքորեն ինտեգրված կառուցակազմ: Այս կազմակերպության ամենատարբեր անդամներ (օրինակ՝ Տաջիկստանն ու Ղրղզստանը) միմյանց միջև ունեն էական հակասություններ, որոնք երբեմն վերածվում են սահմանային ռազմական բախումների: ՀԱՊԿ-ում առկա են սպառնալիքների աղբյուրների տարբեր ընկալումներ, և կազմակերպության գործունեության ներքո նրա անդամ երկրներն առավելապես առաջնորդվում են ոչ այնքան իրավապայմանագրային պարտավորություններով, որքան ռեալպոլիտիկով ու սեփական պետության անհատական և ոչ թե կազմակերպության հավաքական շահերով: Այս տեսանկյունից ՀԱՊԿ-ի կայացման կարևոր ցուցիչը նրա անդամ երկրների շրջանում անվտանգության ընդհանուր ընկալումների ձևավորումն է, հավաքական շահերի մշակումն ու իրացումը, որոնք պետք է սոսնձվեն տնտեսական գործակցության խորացմամբ: Սա

¹⁵ Տե՛ս «Договор о коллективной безопасности», 15.05.1992, http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=126

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

կարևոր է հատկապես ՀՀ-ի պարագայում, քանի որ ՀԱՊԿ-ը և նրա հայ-ռուսական գործակցության բաղադրիչը ՀՀ-ի դեպքում առաջին հերթին դիտվում են որպես Թուրքիայից բխող հնարավոր սպառնալիքներին հակադարձելու հակակշիռ: Սակայն փաստենք նաև, որ ՀԱՊԿ երկրների անվտանգության մոտեցումների ու ազգային շահերի՝ երբեմն միմյանցից տարբերվող բնույթը «հավաքական անվտանգության» հարացույցի որոշ բաղադրիչներ դարձնում է ռիսկային ու ոչ բավարար արդյունավետ: Դրանք, օրինակ, ՀՀ-ի անվտանգության տեսանկյունից կարող են դրսևորվել ՀԱՊԿ-ի որոշ անդամների կողմից դաշինքի անդամ հանդիսացող ու չհանդիսացող գործընկերների միջև հավասարության նշան դնելու կամ ՀԱՊԿ-ին՝ իր դաշնակից երկրի ազգային շահերին հակասող ոլորտներում ակտիվ գործակցության տեսքով: Դա տեղայնացնելի է ՀՀ-ի ու Ադրբեյջանի պարագայում, երբ ՀԱՊԿ անդամ երկրներ ՌԴ-ն, Բելառուսը, Ղազախստանը ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմական գործակցության առումով Ադրբեյջանը դիտարկում են ռազմավարական գործընկեր, իսկ Ադրբեյջանի հետ նրանց ապրանքաշրջանառությունը¹⁸ և ռազմական գործակցությունը¹⁹ մի քանի անգամ գերազանցում են ՀՀ-ի հետ առկա ծավալները:

Միաժամանակ փաստենք նաև, որ հավաքական «անվտանգության» հարացույցի գործարկումը ՀՀ-ի ռազմական անվտանգության քաղաքականության մեջ պաշտոնական Երևանին հնարավորություն է ընձեռում օգտվելու ՀԱՊԿ համակարգի՝ իր համար շահեկան մի շարք հնարավորություններից. մասնավորապես՝ ՀԱՊԿ ձևաչափում առկա միացյալ ՀՕՊ համակարգին ՀՀ-ի անդամակցում, ՀԱՊԿ անդամ երկրներից և հատկապես ՌԴ-ից ռազմական տեխնիկայի ձեռքբերում արտոնյալ գներով²⁰, համատեղ զորավարություններ և անվճար ռազմական

¹⁸ Այս մասին առավել մանրամասն տե՛ս «ՀՀ. Սպրանքների արտահանում և ներմուծում» http://www.armstat.am/file/article/sv_12_16a_411.pdf, «Внешняя Торговля России на основе данных Федеральной таможенной службы России, 28 февраля 2017г. <http://russian-trade.com/reports-and-reviews/2017-02/torgovlya-mezhdu-rossiey-i-azerbayd-zhanom-v-2016-g/>, Взаимная торговля Казахстана с Азербайджаном, http://export.gov.kz/public/files/analytics/country_Review/references/2016/Азербайджан_%202016.pdf, Посольство Республики Беларусь в Азербайджанской Республике, Торгово-экономические отношения, http://azerbaijan.mfa.gov.by/ru/bilateral_relations/trade_economic/

¹⁹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս ЦАМТО / Центр анализа мировой торговли оружием, <http://www.armstrade.org>

²⁰ 2015 թ. ՀՀ-ն ՌԴ-ի հետ ստորագրել է միջպետական վարկի (200 մլն դոլար) համաձայնագիր, որով ՀՀ-ն ներռուսաստանյան գներով անկանխիկ եղանակով ՌԴ-ից ձեռք է բերել զինտեխնիկայի խմբաքանակ, որի մեջ մտնում են «ՏՈՍ-1Ա» ծանր հրանետային համակարգեր, «Մներք» համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր, «Իզլաս-Ս» 9Կ338 դյուրակիր զենիթահրթիռային համակարգեր, «Ավտորազա-Ս» ռադիոտեխնիկական հետախուզության վերգետնյա կայաններ, «9Մ113Ս» հակատանկային կառավարվող հրթիռներ, «Տիգր ՍՍՍ» զրահամեքենաներ և այլն: Հավելենք, որ 2015-16 թթ. ՀՀ-ն ՌԴ-ից ձեռք է բերել «Իսկանդեր-Է» օպերատիվ մարտավարական ՉՀՀ-եր, որի թիրախի խցելիության շեղը կազմում է 280 կմ (առավել մանրամասն տե՛ս «Искандеры» навели на Баку», <https://www.gazeta.ru/army/2017/02/22/10539515.shtml>): 2017 թ. ՀՀ կառավարությունը և ԱԺ-ն հաստատեցին ՌԴ-ից 100 մլն դոլարի ռազմական տեխնիկա գնելու նպատակով նոր վարկ վերցնելու օրինագիծը:

կրթություն չԱՊԿ դաշնակից երկրներում, միջպետական սահմանների համատեղ պաշտպանություն և ամենակարևորը՝ արտաքին հարձակման պարագայում իրավականորեն պարտադիր գործարկման ենթակա միացյալ, այդ թվում՝ ռազմապաշտպանական գործողություններ:

Այս համատեքստում նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ նաև մեկ այլ հարացույցի, որը թեև տեղ չի գտել ՀՀ-ի պաշտոնական որևէ փաստաթղթում, սակայն իր բաղադրատարրերի մասով կարող է ՀՀ ռազմական անվտանգության ապահովման շուրջ հայեցակարգային քննարկում ծավալելու առումով դիտարկելի լինել: «Նախահարձակ ինքնապաշտպանության» այս հարացույցը միջազգային իրավունքի մասնագետները մեկնաբանում են ամենատարբեր դիրքերից: Փորձելով գերծմնալ մեկնաբանման բազմազան մոտեցումներ ներկայացնելուց՝ մենք, ամփոփելով դրանք, ներկայացնում ենք առավել համապարփակ մոտեցում. «Այն պետության իրավունքն ու մեխանիզմն է ռազմական անվտանգության իր կարիքներից ելնելով նախահարձակ ռազմական ուժ կիրառել վերացնելու իրեն անմիջականորեն սպառնացող վտանգի աղբյուրը»²¹: «Նախահարձակ ինքնապաշտպանության» հարացույցը կիրառելի է ռազմական հակամարտության պարագայում, երբ հնարավոր է հստակ արձանագրել իրական սպառնալիքի աղբյուրը, հետևաբար նաև համարժեք արձագանքել դրան մինչև սպառնալիքից բխող վտանգի նյութականացումը: Միջազգային իրավունքի տեսանկյունից՝ «նախահարձակ ինքնապաշտպանության» հարացույցին պետությունները հանգում են ՄԱԿ-ի 51-րդ հոդվածի պահանջների բավարարման պարագայում, երբ առկա է պետության ռազմական անվտանգության հստակ սպառնալիք կոնֆլիկտի տեսքով²²: Միջազգային իրավունքի մեկնաբանությունից գատ, «նախահարձակ ինքնապաշտպանության» հարացույցն ունի նաև սոցիալ-քաղաքական, հոգեբանական և ռազմատեխնիկական չափումներ, որոնց պատշաճ ապահովման պարագայում է այն արդյունավետ և կիրառելի: Սակայն որպես հարացույցի կիրառման առաջնահերթ նախապայման արձանագրենք ռազմատեխնիկական ու ռազմակազմակերպչական անհրաժեշտ գործոնների առկայությունը, որոնք դիտարկելիս կկենտրոնանանք դրանց մի քանի բաղադրատարրերը ներկայացնելու վրա: «Նախահարձակ ինքնապաշտպանության» հարացույցը ռազմական հակամարտության պայմաններում կիրառելի է՝

- երբ հնարավոր ագրեսորի (Ադրբեջան) կողմից հարձակման ենթակա պետությունը (ՀՀ) զրկվել է թիկունքային տարածքներից, այսինքն՝ կիրառելի չէ «նահանջ-ուժերի վերախմբավորում-հակահարձակում» մոդելը,
- եթե հնարավոր ռազմաճակատի երկարությունը մեծ է և պաշտ-

²¹ Синицына Ю. Превентивная и упреждающая самооборона: различия. Правомерность применения, «Журнал международного права и международных отношений», № 1, М., 2009, с. 9.

²² See u **Reisman M., Armstrong A.** The past and future of claim of pre-emptive self-defense // Amer. j. of law. – Wash., 2006. – Vol. 100, № 3, էջ 525–550:

պանվող կողմի մոտ բացակայում են ռազմաճակատի շփման գծի ողջ երկայնքը ապահովելու համար անհրաժեշտ միջոցները,

- եթե պաշտպանվող կողմը ունի համաքանակային հարաբերակա-
նորեն փոքրաթիվ շարժունակ ստորաբաժանումներ, որոնք պրոֆեսիոնա-
լիզմի ու տեխնիկական կահավորվածության շնորհիվ մարտական գործո-
ղությունների վայրերում ունակ են ուժային գերակայություն ապահովել,

- եթե պաշտպանվող կողմը ունի անհրաժեշտ քանակի ռեակտիվ
հրետանային հեռահար համակարգեր, որոնցով ունակ է նախահար-
ձակ գործողությունների՝ կրակային մեծ խտություն ապահովելով հա-
կառակորդի թիկունքային ուժերի, լոգիստիկ ուղիների, թիկունքային
ապահովվածության պահեստային օբյեկտների նկատմամբ,

- եթե պաշտպանվող կողմը ԱԹՄ-ի միջոցով ունակ է թիրախա-
յին խոցումներ իրականացնել հակառակորդի ռազմական ուժի ու
տեխնիկական կուտակումների հիմնական օջախների վրա:

Անդրադառնալով ռազմական անվտանգության դաշնակցային
բաղադրիչին, որը ՀՀ-ի պարագայում դրսևորվում է հայ-ռուսական
ռազմաքաղաքական դաշնակցային հարաբերությունների տեսքով՝
հարկ է նշել, որ այն, բացի ֆորմալ միջազգային իրավական ձևակեր-
պումներից ու փոխադարձ իրավապարտավորեցնող դրույթներից, ու-
նի նաև քաղաքական, կողմերի տարածաշրջանային դերակատարման
հարաբերակցության, շահերի ընդգրկունության, մասշտաբայնության
ու ռեալպոլիտիկի բաղադրիչներ:

Ըստ էության, դաշնակցային հարաբերությունները շահի շուրջ
պետությունների ջանքերի միավորում են, որտեղ կողմերի ձայնի իրա-
վունքը իրականում պայմանավորված է նրանց տիրապետության տակ
գտնվող ռեսուրսներով ու խնդիրներ լուծելու ունակությամբ: Դաշնակ-
ցային հարաբերությունները հաստատվում են պետությունների միջև,
սակայն դրանք կարող են փոփոխվել, եթե պետություններից որևէ մե-
կում քաղաքական իշխանություն կամ արտաքին քաղաքական ուղե-
գիծ է փոխվում: Նշենք, որ դաշնակցային հարաբերությունները ունեն
հիմնականում երկու՝ ներուժային և շահերի ընդհանրության չափում-
ներ: Դրանք հավերժ չեն և գործարկելի են միայն փոխշահավետությ-
ան, իրատեսականության, համատեղ ջանքի ու խելամիտ հաշվարկի
պարագայում: Դաշնակցային հարաբերությունները միմյանց աջակ-
ցություն ցուցաբերելու պարտավորություններ են, այլ ոչ թե գործընկե-
րոջ փոխարեն նրա խնդիրները լուծելու հանձնառություն:

Եթե ՌԴ-ի դեպքում հայ-ռուսական հարաբերությունները իրենց
հարավկովկասյան քաղաքականության մի օղակն են միայն²³, ապա ՀՀ-
ի պարագայում դրանք գոյութենական գործառույթ ու դեր ունեն: Եթե

²³ Ա. Ղևոնդյան, Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքական հայեցա-
կարգի հարավկովկասյան բաղադրիչի փոխակերպումը մինչև 2022թ. // Բանբեր
Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն 13 (3
(39), 2022, էջ 27-45, <https://doi.org/10.46991/BYSU:D/2022.13.3.027>

ՌԴ-ի շահերը գլոբալ ու մակրոտարածաշրջանային բնույթի են, ապա ՀՀ-ն օբյեկտիվորեն զուրկ է աշխարհաքաղաքական անհրաժեշտ դերից ու միջոցներից, որպեսզի ունենա սպասարկման ենթակա արտատարածաշրջանային շահեր: Եթե ՌԴ-ն աշխարհում միջուկային երկրորդ պետությունն է, առաջինը՝ տարածքով ու հավաքական ռեսուրսապահովվածության ցուցիչով, ապա ՀՀ-ն դեռևս անհրաժեշտ միջոցներ չունի սեփական սահմանների անվտանգությունն ապահովելու համար, իսկ տարածքով աշխարհի ամենից փոքր պետություններից է: Եթե ՌԴ-ն գլոբալ անվտանգության ապահովման սուբյեկտ է, ապա ՀՀ-ն այդ անվտանգության տարածաշրջանային սպառող է: Կարելի է, իհարկե, համեմատության բազմաթիվ այլ ցուցիչներ ևս ներկայացնել՝ արձանագրելու համար, թե գերտերության ու ներկայումս պետականագրկման ռիսկերի մեջ գտնվող պետության միջև արդյո՞ք իրատեսական և տրամաբանական են աշխարհաքաղաքական ու ազդեցության դիրքերից հավասար գործակցային ու դաշնակցային հարաբերությունները, թե ոչ:

Քննարկվող հիմնահարցին ռեալպոլիտիկի դիրքերից մոտենալու դեպքում ակնհայտ է, որ չնայած իրավական ֆորմալ պարտավորություններին՝ հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունները ունեն ֆորմալ ձևակերպում և քաղաքական ու աշխարհաքաղաքական խտություն, որը նշանակում է, որ գերտերության շահերի միջակայքը օբյեկտիվորեն առավել լայն է, ընդգրկուն, քան փոքր պետության շահերի շրջանակը և դրանք ապահովելու ռեսուրսները: Հետևաբար հենց այս դիրքերից է անհրաժեշտ ու իրատեսական դիտարկել տարածաշրջանային խախտված ուժային հավասարակշռության պայմաններում հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների փիլիսոփայությունն ու գործարկման հնարավորությունները: Այս հարցում իրատեսականությունն առաջին հերթին անհրաժեշտ է հատկապես ՀՀ-ին, քանի որ ենթադրելի է, որ հենց նա է օբյեկտիվորեն շահագրգիռ, որ գործակցային ձևաչափը արդյունավետ աշխատի, քանի որ ունի գոյաբանական սպառնալիքներ և չունի հստակ մշակված ու տեսանելի գործիքներ այդ սպառնալիքների դիմագրավելու մասով: Իրատեսականությունը միջպետական դաշնակցության մեջ փոխադարձ արդյունավետության առաջին նախապայմանն է: Միաժամանակ, զգացմունքայնությունը, պոպուլիզմը, մակերեսայնությունը, անիրատեսականությունն ու անհետևողականությունը ամենից վտանգավոր գործոններն են, որ առաջնահերթ խնդրահարույց իրավիճակի մեջ են դնում փոքր պետության կենսական շահերի ու ռազմական անվտանգության ապահովման հեռանկարները:

Ամփոփելով նշենք, որ Հարավային Կովկասում խախտված ուժային հավասարակշռությունը, որը դեռ չի որոշակիացել, պայմաններ է ստեղծում, որ ՀՀ-ն շատ ավելի սթափ ու հստակ արձանագրի իր ազգային շահերը, իր կենսական շահերի կարմիր գծերը և դրանց ապահովման համար անհրաժեշտ ներուժային մեխանիզմները:

Հաշվի առնելով աշխարհաքաղաքական նոր իրողություններն ու գլոբալ բախման վտանգը՝ ՀՀ-ն պետք է գիտակցի, որ աշխարհում չեզոքություն պահել չի ստացվելու, քանի որ ներկա աշխարհաքաղաքական բախման տրամաբանությունը²⁴ տեղավորվում է «կամ-կամ» հարացույցի մեջ, իսկ դա նշանակում է, որ սեփական շահերը ձևակերպելիս պետք է դրանք համադրել այդ շահերին առավել մոտ կանգնած պետությունների մոտեցումների հետ, ինչպես նաև սթափ գնահատել «գործընկերներ-հակառակորդներ» շրջանակը:

Ուժային հավասարակշռության փոփոխված իրողությունների ներքո ՀՀ-ն ազգային շահերի ու ռազմական անվտանգության ապահովման նպատակով պետք է անվտանգային ռիսկերի համալիր գնահատման մոդել մշակի ու գործարկի, որը բարձր իրատեսականության ու չափելիության շրջանակում հնարավորություն կստեղծի, որ «շահեր-իրացման միջոցներ-սպառնալիքներ» եռամիասնությունը արդյունավետ ու օպերատիվ գործի:

Ռեսուրսների ու չափելի շահերի տիրույթում պետք է մշակվի ՀՀ ռազմական անվտանգության ապահովման քաղաքականության մոդելը, որը պետք է ներառի հիբրիդային և համակցված լուծումներ «հավաքական անվտանգության», «նախահարձակ ինքնապաշտպանության», պրոֆեսիոնալ բանակի ու պարտադիր զինծառայության տարրերի ներգրավման բաղադրիչներով:

Ազգային շահերի ու ռազմական քաղաքականության կիրառական հարացույցի ընտրությունը պետք է լինի դաշնակցային հարաբերությունների ձևի ու բովանդակության հաշվառմամբ, որի հիմքում պետք է լինեն դաշնակցության ու գործընկերության իրատեսական ու արդյունավետ մոդելի ընտրությունն ու գործարկումը՝ զերծ ռեալպոլիտիկի դաշտից դուրս մոտեցումներից:

АЛЕН ГЕВОНДЯН – Проблемы обеспечения безопасности и конкретизации национальных интересов РА в трансформирующемся мире в контексте новых парадигм союзничества*. – Нынешний этап глобального конфликта между Западом и Российской Федерацией беспрецедентен как по своим масштабам, глубине, так и по характеру противостояния. Такое противостояние создает условия для того, чтобы механизмы международной безопасности, организации и международное право приобрели новую роль и значение. В контексте этого меняется мировой порядок, сложившийся после распада СССР, а также глобальный баланс сил.

Изменение баланса сил на Южном Кавказе произошло в результате войны 2020 года. Следует отметить, что до сегодняшнего дня в нашем регионе не сформировался новый баланс сил. Об этом свидетельствует сохраняющаяся напряжен-

²⁴ Այդ մասին տե՛ս **Khojayan K.** Reflections on the Transformation of the World Order: Emerging Trends and Impending Perspectives // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(2), 2022, էջ 92-105, <https://doi.org/10.46991/JOPS/2022.1.2.092>

* Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке МОНК РА в рамках научного проекта № 21Т-5F218.

Քաղաքական փոփոխություններին առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել լիբերալ-լիբերտարիստական գաղափարախոսության ֆորպոստ ԱՄՆ-ում, որտեղ 2016 թ. նախագահական ընտրություններում Դ. Թրամփի հաղթանակից հետո, ըստ երևույթին, սկսվեց հասարակության գաղափարական բևեռացման շրջան: Այս գործընթացն զգալիորեն արագացավ 2020 թ. ի վեր՝ դեմոկրատական կուսակցությունից նախագահի իշխանության գալով: Երկրում աստիճանաբար խորանում է անջրպետը հասարակության երկու հաստիքների միջև, որոնք արմատապես տարբերվում են լիբերալ-դեմոկրատական արժեքային կողմնորոշումների ընկալումներով:

Այլ պետություններում լուրջ կշիռ են ստացել քաղաքական այն ուժերը, որոնք հանդես են գալիս ազգային դիրքերից և նշում են նեոլիբերալ բազմաթիվ դրույթների թերարժեքությունը ազգային անվտանգության ապահովման և բնիկ եվրոպական ժողովուրդների շահերի պաշտպանության տեսանկյունից: Սրա մասին են վկայում, համենայնդեպս, Եվրախորհրդարանի վերջին ընտրությունների արդյունքները: Շատ եվրոպացիների անհանգստացում է, առաջին հերթին, «գերժողովրդավար» երկրների անկարողությունը դիմակայելու մարզինալ շերտերի մարտահրավերներին, որոնք զգալիորեն ակտիվացել են

զանգվածային միգրացիոն գործընթացների ծավալման պայմաններում: Այս երկրներում կառավարության գենդերային նախաձեռնությունների նկատմամբ լուռ բոյկոտ է նկատվում: Ավելանում է ԵՄ-ի շատ քաղաքացիների դժգոհությունը սոցիալական արդարության ապահովման ներկա մակարդակից, որը տուժում է խոշոր կապիտալի սանձազերծ վարքագծից: Այսպես թե այնպես, թվարկված քաղաքական ուժերը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կասկածի տակ են դնում գլոբալ զարգացման ներկայիս հարացույցը և հավատարիմ են մնում նեոլիբերալ արժեհամակարգից տարբերվող բարոյական ուղենիշներին:

Աշխարհում սկսել է ավելի մեծանալ ինչպես գլոբալ հարացույցի սոցիալ-տնտեսական, այնպես էլ լիբերալ-լիբերտարիստական արժեքային ասպեկտների վերաբերյալ քննադատական գնահատականների կողմնակիցների թիվը: ՌԴ նախագահ Վ. Պուտինը խոշոր պետությունների դեկավարներից առաջինն է խոսել այս մասին՝ պատասխանելով «Financial Times»-ի անգլերեն հրատարակության թղթակիցների հարցերին: Նա քննադատել է ժամանակակից լիբերալիզմը առաջին հերթին որպես արժեքային համակարգ¹⁰: Ֆրանսիայում կայացած G-7 գագաթնաժողովի շրջանակներում նախագահ Է. Մակրոնը միանշանակ հայտարարեց, որ կապիտալիզմի ժամանակակից մոդելը «ժանգոտել է ժողովրդավարական համակարգի դեգրադացիայի հետևանքով»¹¹: 2022 թ. Դալլասում կայացած Ամերիկյան պահպանողական միության կոնֆերանսի ժամանակ ժամանակակից ժողովրդավարական երկրների ներկա և նախկին շատ առաջնորդներ բացահայտորեն մերժեցին աշխարհին պարտադրված գենդերային քաղաքականության սկզբունքները, որոնք այսօր համարվում են գրեթե հիմնական չափանիշ որևէ երկրում ժողովրդավարության զարգացման աստիճանը որոշելու համար¹²:

Արդի փուլում Չինաստանն ու Ռուսաստանը ձգտում են ստանձնել ողջ աշխարհում հակալիբերտարիստական միասնական ճակատի դերակատարությունը: Մասնավորապես, Պեկինում օլիմպիական խաղերի նախօրեին ընդունված համատեղ հայտարարության առաջին մասում կողմերը ուրվագծել են ժողովրդավարության իրենց պատկերացումները, որոնք սկզբունքորեն տարբերվում են արևմտյան երկրների մոտեցումներից: Այսպիսով, երկու պետություններն էլ, փաստորեն, հայտարարեցին աշխարհում սեփական արժեհամակարգով նոր գաղափարական բևեռի ձևավորման մասին, որը կարող է բավականին գրավիչ դառնալ շատ ժողովուրդների համար, հատկապես որ այս երկրներում

¹⁰ Տե՛ս **Путин В.** Интервью газете «The Financial Times» // Официальный сайт Кремля –<http://www.kremlin.ru/events/president/news/60836>, հասանելի՝ 15.04.2023:

¹¹ Макрон заявил, что «капитализм деградировал и сошел с ума» // «ТАСС» – <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/6793858>, հասանելի՝ 15.05.2023:

¹² Տե՛ս **Orban otzheg na съезде консерваторов США: Меньше трансвеститов, больше Чака Норриса** // «EurAsiaDaily» –<https://eadaily.com/ru/news/2022/08/05/orban-otzheg-na-sezde-konservatorov-ssha-menshe-transvestitov-bolshe-chaka-norrisa>, հասանելի՝ 15.04.2023:

սրա համար գաղափարական օբյեկտիվ նախադրյալներ կան: Չպետք է մոռանալ, որ Չինաստանում, տիրապետող կոմունիստական գաղափարախոսությանը զուգահեռ, հասարակական կյանքում գերիշխում է նաև ավանդական կողմնորոշում ունեցող պահպանողական բովանդակությամբ կոնֆուցիական արժեհամակարգը: Ռուսաստանը ևս քաղաքական բարձր մակարդակում երկիրը պահպանողական շարժման՝ «խելամիտ պահպանողականության» կենտրոններից մեկը վերածելու հայտ ներկայացրեց՝ իր նկրտումներին համապատասխանեցնելով Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության փոփոխությունները¹³:

Վերը նշված ռուս-չինական համատեղ հայտարարությունը կարելի է համեմատել համաշխարհային քաղաքականության մեջ նոր բևեռի ձևավորման մասին պաշտոնական մանիֆեստի հետ: Երկու պետություններն էլ ընդհանուր տեսլական են մշակել համաշխարհային խնդիրների և, որ ամենակարևորն է, աշխարհում արժեքային կողմնորոշումների և գաղափարաքաղաքական գործընթացների վերաբերյալ: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ այս երկու երկրների մասնաբաժինը համաշխարհային տնտեսության մեջ արդեն միանգամայն համեմատելի է ամերիկյանի հետ (մոտավորապես 20%), իսկ տնտեսական ու պաշտպանական մի շարք ոլորտներում այն գերազանցում է Միացյալ Նահանգների ներուժը: Պետք է հաշվի առնել նաև այս պետությունների հսկայական ներդրումներն աշխարհի առանցքային կետերում, ինչպես նաև տնտեսական և ռազմաքաղաքական դաշնակիցների առկայությունը:

Ժամանակակից պահպանողականությունն իրականության նկատմամբ պրագմատիկ վերաբերմունք ունի: Իր զարգացման ընթացքում, պատշաճ ուշադրություն հատկացնելով ժողովրդավարության հաստատման անհրաժեշտության և անխուսափելիության հարցին, նա շատ բան է որդեգրել իր ազատական հակառակորդներից: Սակայն, ելնելով «մասնավորի» նկատմամբ «ընդհանուրի» գերակայության իրենց սկզբունքային մոտեցումներից, պահպանողականները ընդունել են լիբերալ ժողովրդավարության մայրցամաքային-կոլեկտիվիստական մեկնաբանությունը: Ներկայումս ժամանակակից խնդիրների վերաբերյալ նման տեսլականը մեծապես համապատասխանում է հետխորհրդային բազմաթիվ հասարակությունների սրամադրություններին:

Լիբերալիզմի դեմ ավելի քան երկու հարյուր տարի մղած քաղաքական պայքարի ընթացքում կոնսերվատիզմը ենթարկվել է տարբեր ձևափոխությունների: Օրինակ, «ուժեղ պետության»՝ որպես ավանդական հասարակության պահպանի գաղափարը կոնսերվատորները փոխարինել են հասարակական կյանքի կարգավորման գաղափարով՝ հիմնականում բարոյական նորմերի և ավանդույթների միջոցով: Այժմ

¹³ St u Путин поддержал умеренный консерватизм, сравнив его с врачебным принципом «не навреди», «ТАСС» – <https://tass.ru/politika/12728229>, հասանելի՝ 15.04.2023:

կոնսերվատիզմը շուկայական հարաբերությունների ամրապնդման, քաղաքացիական հասարակության ինստիտուտների օգնությամբ պետական մարմինների վերահսկողություն իրականացնելու, տնտեսությունում հիրավի մրցակցային պայմանների ապահովմամբ՝ հասարակության շարքային անդամների նախաձեռնությունների և ազատ ձեռներեցային գործունեության դրսևորման կողմնակիցն է:

Ի տարբերություն իրենց նախորդների՝ արդի կոնսերվատորները դեմ են պետական իշխանության ամրապնդմանը, որը սահմանափակում է անհատի ազատությունը, ստեղծում կոռումպացված բյուրոկրատիա, ավելորդ վերահսկողությամբ զսպում է գործարար նախաձեռնությունը, ի վիճակի չէ բարելավելու կյանքի որակը: Ընդհանուր առմամբ, կոնսերվատիվ կուսակցությունները ստատուս քվոն պաշտպանող կուսակցություններից վերածվել են ազատ հասարակության ամրապնդմանն ուղղված արմատական ռեֆորմներ նախաձեռնողների ու իրականացնողների, այդ թվում՝ և զարգացած արդյունաբերական երկրներում: Արդի կոնսերվատիզմը հակադրելով 1980-ական թթ. լիբերալ-ռեֆորմիստական գաղափարաքաղաքական հոսանքին անգլիացի պատմաբան և լրագրող Փ. Քոլին նշում է, որ դասական լիբերալիզմի իսկական գաղափարակիրները դարձան հենց պահպանողական կուսակցությունները, որոնք կրկին բարձրացրին սոցիալ-լիբերալների «երկչոտաբար» դեն նետած «ազատության դրոշը»¹⁴:

Ուսականողական գաղափարախոսության թվարկված դրույթներն ըստ էության հանդես են գալիս որպես հասարակությունների ժողովրդավարացման ժամանակակից գործընթացների լիբերալ-լիբերտարիստական ընկալման այլընտրանք: Ուստի պահպանողական արժեհամակարգը միանգամայն ունակ է մրցակցելու նեոլիբերալների հետ գլոբալ զարգացման հիմնական վեկտորի ձևավորման հարցում:

Գլոբալ զարգացման վեկտորի գաղափարական և արժեքային բազայի փոփոխության գործում վճռորոշ դեր կարող է խաղալ նաև սոցիալիստական գաղափարախոսությունը: Չպետք է մոռանալ, որ աշխարհում երկրորդ տնտեսությունը ունեցող երկրի հասարակությունը լիովին կողմնորոշված է դեպի սոցիալիստական և կոմունիստական գաղափարները: Ռուսաստանում՝ որպես աշխարհի երկրորդ ռազմաքաղաքական կենտրոնում, համատեղ կյանքի կազմակերպման սոցիալիստական սկզբունքները դեռ ամուր հիմքերի վրա են: Լատինական Ամերիկայի, Մերձավոր Արևելքի, Հարավարևելյան Ասիայի և Աֆրիկայի շատ երկրներ ևս իրենց ժողովուրդների ինքնագիտակցության գաղափարական բաղադրիչի և կուլեկտիվիստական վարքագծի նորմերին հավատարմության առումով մոտ են այդ գաղափարական սկզբունքներին և չեն ընդունում լիբերալ հարացույցը: Շատ առումներով նրանք տար-

¹⁴ St' u Colly P. Studies in the History of Ideas. L., 1983, էջ 41:

բերվում են արդարության, բարոյականության, ավանդույթի և հավատքի իրենց յուրահատուկ ըմբռնումներով: Հատկանշական է, որ ուկրաինական ճգնաժամի սրացումից հետո նրանցից շատերը Ռուսաստանի հետ հարաբերությունները պահպանում են «բարիդրացիական չեզոքության» մակարդակում՝ այդպիսով իրենց դիրքավորելով որպես ապագա ոչ լիբերալ համաշխարհային բնեռի կողմնակիցներ:

Այսպիսով, ներկա սերունդն ականատեսն է վերջին 2-3 տասնամյակների ընթացքում տիրապետած ժամանակակից գլոբալ զարգացման հարացույցի գաղափարական և արժեքային հիմքերի վերափոխմանը: Պատմական այս փուլում դրանք արմատական բնույթ են ստացել, ինչը պատճառ է դարձել, որ շատ ժողովուրդներ լուրջ մտահոգություններ ունենան իրենց երկրներում դրա հետագա արմատավորման վերաբերյալ: Ուկրաինական ճգնաժամի հետ կապված միջազգային իրավիճակի սրումը զգալիորեն արագացնում է համաշխարհային հանրության հսկայական զանգվածի գաղափարական և արժեքային վերակողմնորոշման գործընթացը լիբերալ միտմանը հակառակ¹⁵: Այնուամենայնիվ, շատ ժողովուրդներ պահպանել են միանշանակ դրական վերաբերմունքը համամարդկային շատ արժեքների նկատմամբ, որոնք աշխարհում տարածվել են հենց ազատականության շնորհիվ: Դրանք փոխառվել են ժամանակակից բազմաթիվ գաղափարաքաղաքական հոսանքների կողմից, որոնք պատրաստ են գլոբալ զարգացման հարացույցի հետագա վերափոխման համար հիմք ծառայել:

АШОТ ЕНГОЯН, ХОСРОВАДУХТ АЗАТЯН – Предпосылки трансформации идейных и ценностных основ парадигмы глобального развития. – С образованием однополюсного мира, а также с утверждением нового финансово-экономического миропорядка с соответствующими рычагами воздействия на страны и народы, современный мир столкнулся с индивидуалистической англо-саксонской трактовкой либеральной демократии, которая стала идейной основой современной парадигмы глобального развития. Такие бесспорные принципы либеральной демократии, какими являются свобода личности, неприкосновенность прав человека, правовое государство, парламентская демократия, плюрализм, гражданское общество, экономика, основанная на принципе конкуренции и некоторые другие стали неотъемлемой частью общечеловеческой политической культуры. Однако многие из радикализированных положений этой ценностной системы воспринимаются многими народами в качестве «безальтернативных» и «единственно верных». Во многих странах все отчетливее проявляется противопоставление приоритетных у себя морально-нравственных и духовных ценностей неолиберальным нормам поведения. Тем самым создаются предпосылки для трансформации парадигмы глобального развития.

Ключевые слова: *неолиберализм, ценностная система, консерватизм, социализм, нормы, традиции, либеральная демократия*

¹⁵ Մ. Վարդապարյան, Ռուս-ուկրաինական ռազմական հակամարտությունը և Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիայի հրամայականները // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն № 2, 2022, էջ 15-25:

ASHOT YENGOYAN, KHOSROVADUKHT AZATYAN – *Prerequisites for the Transformation of the Ideological and Value Foundations of the Global Development Paradigm.* – With the formation of unipolar world and the approval of the new financial and economic world order with appropriate levers of influence on countries and nations, the modern world has faced an individualistic Anglo-Saxon interpretation of liberal democracy, which has become the ideological basis of the modern paradigm of global development. Such indisputable principles of liberal democracy as personal freedom, inviolability of human rights, the rule of law, parliamentary democracy, pluralism, civil society, economy based on the principle of competition and some others have become an integral part of the universal political culture. However, many of the radicalized provisions of this value system are not perceived by many peoples as “no alternative” and “the only true”. In many countries the opposition of priority moral and spiritual values to the neoliberal norms of behavior is becoming more and more evident. This creates the prerequisites for the transformation of the paradigm of global development.

Key words: *neoliberalism, value system, conservatism, socialism, norms, traditions, liberal democracy*

ԳԼՈՒԲԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

ՓԱՅԼԱԿ ԵՆԳՈՅԱՆ

Գլոբալ զարգացման ժամանակակից հարացույցը առանձնանում է վառ արտահայտված նեոլիբերալ բովանդակությամբ, որտեղ հիմնական շեշտը դրվում է լիբերալ արժեքների, առավելագույն անհատական ազատության ապահովման, ժողովրդավարության արևմտյան մոդելի ընդունման, ինչպես նաև շուկայական հարաբերությունների վրա հիմնված վարքի նորմերի վրա: Ընդամին ընդգծվում է ֆինանսատնտեսական քաղաքականության հատուկ դերը գլոբալ զարգացման վեկտորի որոշման գործում: Այս հարացույցի հիմքը Բրեթոն Վուդսի և Ճամայկայի արժույթային համակարգերն են: Համաշխարհային քաղաքականության որոշ դերակատարների ուժեղացման ֆոնին նախադրյալներ են ձևավորվում միաբնեռ աշխարհը բազմաբնեռի վերածելու համար, ինչը խթանում է գլոբալ զարգացման վեկտորի փոխակերպումը: Սպառվում են ինստիտուտների և տեխնոլոգիաների ներկայիս համակարգի հիման վրա սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները: Նոր այլընտրանքային ուժային կենտրոնները հիմնված են արտադրական հարաբերությունների նոր համակարգի՝ ռեսուրսները կենտրոնացնելու և մարդկային ներուժն ակտիվացնելու ունակության վրա՝ նոր տեխնոլոգիական կառուցվածքի բեկումնային ուղղություններով:

Բանալի բառեր – *գլոբալ զարգացման հարացույց, մոնետարիզմ, քեյնսականություն, Բրեթոն Վուդսի ֆինանսական համակարգ, բազմարժույթային համաշխարհային ֆինանսական համակարգ, համաշխարհային տնտեսական կացութաձև, համաշխարհային ուժային կենտրոններ*

Գլոբալ զարգացման ժամանակակից հարացույցը, որը մեծապես պայմանավորված է միաբնեռ աշխարհակարգով, ներկայումս վերափոխման փուլում է: Համաշխարհային քաղաքական-տնտեսական համակարգի բնույթի և բովանդակության վրա ազդում են ոչ միայն գլոբալացման և աշխարհաքաղաքական գործընթացները, այլև համաշխարհային և տարածաշրջանային մակարդակներում սոցիալական և ազգային տարբեր շարժումները, երկրների բնակչության վերաբերմունքը այս կամ այն արժեքներին, ինչպես նաև համաշխարհային տնտեսության և ֆինանսների վիճակը հատկապես այն ոլորտներում, որոնք ավանդաբար դրանց խթաններն են: Ժամանակակից հարացույցը, ինչպես հայտնի է, վերջնականորեն ձևավորվեց «սառը պատերազմի» ա-

վարտից հետո և աչքի է ընկնում վառ արտահայտված նեոլիբերալ բովանդակությամբ, որը շատ քաղաքագետներ բնորոշում են որպես նեոլիբերալ-լիբերտարիստական մոնետարիզմ: Այն հարում է նեոլիբերալ-լիբերտարիստական արժեհամակարգին, որը կոչված է առավելագույնս ապահովելու անհատի ազատությունը՝ ժողովրդավարական վերափոխումների իր ընկալումով, վարքի համամարդկային նորմերի սեփական մեկնաբանմամբ՝ հիմնված շուկայական հարաբերությունների ամենագործության վրա¹: Դրանք ներկայացվում են բացասական լույսի ներքո ինչպես տնտեսության մեջ, այնպես էլ հասարակական կյանքի այլ ոլորտներում բոլոր երևույթները համադրելիս:

Գլոբալ հարացույցի անվանման մեջ «մոնետարիզմ» հասկացության մատնանշումն ընդգծում է ֆինանսատնտեսական քաղաքականության բացառիկ դերը գլոբալ զարգացման ուղղվածությունը որոշելիս: Համաշխարհային ֆինանսական համակարգում մոնետարիստական մոտեցումը դարձավ գերակշռող այլ հասկացությունների հետ մրցակցության պայմաններում: Համաշխարհային քաղաքակրթության զարգացման պատմության ընթացքում տարբեր մոտեցումներ են եղել տնտեսության մեջ պետության դերը գնահատելու և դրամավարկային քաղաքականության մեխանիզմի հարցերին: Դրանց շարքում առանձնանում են երկու հակադիր ուղղություններ՝ քեյնսականությունը և մոնետարիզմը:

Քեյնսի տեսությունը ամենատարածվածն էր քսաներորդ դարի առաջին կեսին՝ ԱՄՆ տնտեսության անկումից հետո, ուստի այս տեսության մեջ տնտեսությունը դիտարկվում էր որպես հասարակական կյանքի ոլորտ, որը հայտնվել է ճգնաժամային վիճակում: Ենթադրվում էր, որ առանց պետության միջամտության տնտեսությունն ի գործու չէ դուրս գալու այս վիճակից: Ջոն Քեյնսը կարծում էր, որ շուկայական կապիտալիստական տնտեսության ինքնակարգավորումն անհնար է, պետությունը պետք է քայլեր ձեռնարկի երկրում պահանջարկը խթանելու համար՝ վարելով դրամավարկային և ֆինանսաբյուջետային ակտիվ քաղաքականություն²: Քեյնսի հայեցակարգը նախատեսում է, որ ներդրումային և ձեռնարկատիրական գործունեության կարգավորման ու խթանման հիմնական գործիքը Կենտրոնական բանկի տոկոսադրույքն է, որը ենթադրում է «էժան փողի քաղաքականության» կիրառում տնտեսական անկման ժամանակ՝ իջեցնելով բանկային տոկոսադրույքը, իսկ տնտեսական վերելքի ժամանակահատվածներում՝ «թանկ փողի քաղաքականության» կիրառում՝ տնտեսության գերտաքացումը կանխելու համար: Այսպիսով, դրամային քաղաքականություն-

¹ Տե՛ս **Енгоян П.** Основной инструментарий применения «Мягкой силы» в мировой политике // Вестник Ереванского Университета: Международные отношения, Политология 10 (3 (30), 2019, էջ 40-50.

² Տե՛ս **Кейнс Д.** Общая теория занятости, процента и денег. М.: Эксмо, 2022:

նը պետք է իրականացվի տնտեսական պարբերաշրջանի փուլերին համապատասխան և արագ արձագանքի ազգային տնտեսության վիճակին:

Սակայն Քեյնսի տեսության մեջ նկատվեցին էական թերություններ, որոնց պատճառով առաջացավ միանգամայն հակադիր մոնետարիստական տեսությունը: Դրա հիմնադիր Միլթոն Ֆրիդմանը դեմ էր տնտեսության պետական կարգավորմանը՝ համարելով, որ դա ոչ միայն անօգուտ է, այլև նույնիսկ վնասակար: Մոնետարիզմի տեսանկյունից տնտեսության մեջ պետության միջամտությունը պետք է սահմանափակվի միայն դրամի շրջանառության վերահսկմամբ: Պետության ցանկացած այլ մասնակցություն տնտեսական գործընթացներին հանգեցնում է անհամամասնությունների և աղավաղումների: Փողի զանգվածը մեծացնելով կամ նվազեցնելով՝ կարելի է փոխել տոկոսադրույքը՝ այդպիսով ազդելով ներդրումների, հետևաբար և՛ արտադրության ծավալի վրա:

Ըստ մոնետարիստների՝ «ճկուն» դրամավարկային քաղաքականության իրականացումը լուրջ վտանգ է պարունակում, քանի որ տնտեսության կարգավորման ոլորտում ընդունված որոշումների ազդեցությունը նկատելի է դառնում միայն որոշ ժամանակ անց (6-9 ամիս), ինչի հետևանքով կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ կենտրոնական բանկերի ձեռնարկած միջոցները կարող են ուշացած լինել: Ուստի և մոնետարիզմը հանդես է գալիս կոշտ դրամավարկային քաղաքականություն իրականացնելու օգտին, որը կախված չէ ձևավորված իրավիճակից և ուղղված է գնաճը սահմանափակելուն: Այս քաղաքականության գլխավոր գործառույթը շրջանառության մեջ դրվող փողը վերահսկելն է՝ ելնելով տնտեսության երկարաժամկետ աճի տեմպին համապատասխանող որոշակի մակարդակից: Այդ նպատակով, անկախ պարբերաշրջանի փուլերից, անհրաժեշտ է ամեն տարի ավելացնել շրջանառության մեջ գտնվող դրամային զանգվածը երկար ժամանակահատվածի համար հաշվարկված ՀՆԱ-ի միջին տարեկան աճի չափով: Սա թույլ է տալիս որոշակի պայմաններում բավականին արդյունավետ կառավարել գնաճը և խթաններ ստեղծել տնտեսական աճի համար: Ենթադրվում է, որ դրամավարկային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գնաճը վերահսկելուն, այլ ոչ թե պահանջարկի վրա ազդելուն: Այսինքն՝ հիմնական տոկոսադրույքը կարգավորելու միջոցով կենտրոնական բանկերը ազդում են հենց փողի զանգվածի վրա՝ հասնելու գնաճի սահմանված մակարդակին, այլ ոչ թե իրական ՀՆԱ-ի ծավալին:

Ազատական մոնետարիզմի՝ ժամանակակից գլոբալացման գործընթացների յուրատեսակ շրջանառու համակարգի գործառնության հիմքը համաշխարհային արժույթային-ֆինանսական համակարգն է, որը ձևավորվել է միջազգային հարաբերությունների Յալթա-պոտսդամ-

յան համակարգի շրջանակներում՝ սկսած Բրեթոն-Վուդսի համաժողովից մինչև արդի չափանիշներին համապատասխանեցված միջոցառումներ և լուծումներ:

XX դարի 30-ական թվականներին, տնտեսական ճգնաժամով պայմանավորված, շատ երկրներ կիրառում էին արժույթների արժեզրկումը որպես մրցակցային առավելություն, ինչպես նաև բազմաթիվ փոխարժեքներ, կապիտալի տեղաշարժի սահմանափակումներ՝ ազգային տնտեսությունը խթանելու նպատակով: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում արդեն արժույթային սահմանափակումներ կիրառեց աշխարհի առաջատար երկրների մեծ մասը: Արժույթների սառեցված փոխարժեքները հազվադեպ էին փոփոխվում, բայց փողի գնողունակությունը նվազում էր գնաճի մեծացման պատճառով: Նման պայմաններում հասունացավ միջազգային արժույթային համակարգի սկզբունքների վերանայումը:

Հետպատերազմյան արժույթային համակարգի սկզբունքները մշակեցին տնտեսագետների մի քանի թիմեր. հիմնական նախագծերը ներկայացրին Հարի Ուայթը (Միացյալ Նահանգներ) և Ջոն Քեյնսը (Մեծ Բրիտանիա): Փորձագետների նպատակն էր ստեղծել արժույթային այնպիսի համակարգ, որը կապահովեր արժույթների փոխարժեքների կայունությունը, հետպատերազմյան տնտեսական աճը և կսահմանափակեր ճգնաժամերի սոցիալ-տնտեսական հետևանքները:

1944 թվականի հուլիսին, երբ արդեն կանխորոշված էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ելքը, ԱՄՆ Նյու Հեմփշիր նահանգի Բրեթոն Վուդս փոքրիկ քաղաքում տեղի ունեցավ ֆինանսական համաժողով (The United Nations Monetary and Financial Conference): Դրա հիմնական խնդիրներն էին միջազգային արժույթային և ֆինանսական հարաբերությունների կարգավորումը, ինչպես նաև արժույթային նոր համակարգի սկզբունքների համաձայնեցումը: Համաժողովին մասնակցեցին 44 պետությունների պատվիրակներ: Այնտեղ ընդունված որոշումները հսկայական ազդեցություն ունեցան աշխարհի առաջատար տնտեսությունների հետպատերազմյան զարգացման վրա³:

ԱՄՆ դոլարը ճանաչվեց համաշխարհային հիմնական արժույթ, որը կարելի էր փոխանակել ոսկով՝ 1 տրոյական ունցիայի դիմաց (31,1 գր.)՝ 35 ԱՄՆ դոլար հարաբերակցությամբ: Բրիտանական ֆունտ ստեռլինգը հայտարարվեց երկրորդ պահուստային արժույթ: Մյուս արժույթների փոխարժեքները կցվեցին դոլարին: Պատերազմի ընթացքում Միացյալ Նահանգների տնտեսությունը զգալիորեն ուժեղացավ, և այդ երկիրն ընտրվեց ֆինանսական ու տնտեսական հզորության և կայունության սկզբունքով:

Արժույթային համակարգը կառավարելու համար ստեղծվեցին Ար-

³ Ст' у Бреттон-Вудская финансовая конференция 1944 года. Справка // «РИА Новости» – <https://ria.ru/20090722/178243946.html>

ծույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (Համաշխարհային բանկ՝ ՀԲ):

ԱՄՀ-ն կոչված էր ստեղծելու միջազգային հաշվարկների համակարգ ընթացիկ գործարքների, փոխարժեքների կայունությունը պահպանելու և մասնակից երկրներին կարճաժամկետ և միջնաժամկետ վարկեր տրամադրելու համար՝ վճարային հաշվեկշռի պակասուրդը ծածկելու նպատակով: Համաշխարհային բանկը, իր հերթին, պետք է երկարաժամկետ վարկեր տրամադրեր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երկրների վերականգնման համար և օգներ զարգացող երկրներին՝ հաղթահարելու աղքատությունը՝ սկիզբ դնելով կայուն տնտեսական աճին:

Երկրների կենտրոնական բանկերը պետք է ապահովեին արժույթների կայուն փոխարժեքը՝ անհրաժեշտության դեպքում կատարելով արժույթային միջամտություններ: Ռեսուրսների պակասի դեպքում պետությունները կարող էին դիմել ԱՄՀ-ի օգնությանը: Երկրները կարող էին արժեգրկել կամ արժևորել իրենց արժույթները վճարային հաշվեկշռի հավասարակշռությունը հիմնովին խախտվելու դեպքում Արժույթի միջազգային հիմնադրամի հետ խորհրդակցելուց հետո⁴:

ԽՍՀՄ-ը թեև մասնակցեց համաժողովին, սակայն հետագայում Խորհրդային Միության ղեկավարությունը «սառը պատերազմի» հաստատման համապատկերում չվավերացրեց համաժողովում ընդունված համաձայնագրերը և չմասնակցեց Համաշխարհային բանկի և ԱՄՀ-ի աշխատանքներին: Միայն 1991 թվականին ԽՍՀՄ փլուզման նախաշեմին երկրին տրվեց ԱՄՀ ասոցացված անդամի կարգավիճակ: Ռուսաստանը որպես ԽՍՀՄ իրավահաջորդ, 1992-ի հունիսին դարձավ ԱՄՀ-ի և ՀԲ-ի անդամ:

Բրեթոն Վուդսի արժույթային համակարգը կարևոր դեր խաղաց հետպատերազմյան վերականգնման տարիներին և հետագայում աշխարհի առաջատար երկրների տնտեսությունների զարգացման գործում: Սակայն Եվրոպայի և Ասիայի երկրների տնտեսությունների աճին, ինչպես նաև միջազգային առևտրի զարգացմանը զուգընթաց՝ առաջատար երկրներին անհրաժեշտ եղան ավելի ու ավելի մեծ ծավալի հաշվարկային միջոցներ: Բրեթոն Վուդսի արժույթային համակարգը կարող էր հաջողությամբ գործել միայն այնքան ժամանակ, քանի դեռ Միացյալ Նահանգների ոսկու պաշարները թույլ էին տալիս փոխանակել դոլարը ոսկով: Հարկ է նշել նաև, որ ոսկու արդյունահանման ծավալն աճում էր շատ ավելի դանդաղ, քան աճում էին միջազգային առևտրի ծավալները: Դոլարային խնայողություններ ունեցողների՝ դրանք ոսկով փոխանակելու իրավունքը հակասության մեջ մտավ այդ

⁴ St' u Алексеева Н., Медведева А. «Отстаивает интересы США»: 75 лет назад был основан Международный валютный фонд // «Russia Today» – <https://russian.rt.com/business/article/815310-mvf-godovschina-sozdanie>

պարտավորությունը կատարելու ԱՄՆ հնարավորությունների հետ:

ԱՄՆ կարճաժամկետ արտաքին պարտքը 1949-1971 թվականներին աճեց 8,5 անգամ, իսկ ոսկու պաշտոնական պահուստները նույն ժամանակահատվածում նվազեցին 2,4 անգամ⁵: Միայն մի քանի երկրների հաջողվեց կանխիկ դրլարը փոխանակել ոսկով, այն էլ ԱՄՆ կառավարության հետ երկարատև բանակցություններից հետո:

Այդուհանդերձ, Բրեթոն Վուդսի արժութային համակարգի ճգնաժամը պայմանավորված էր ոչ միայն ԱՄՆ ոսկու պաշարների կրճատմամբ: Այս հանգամանքին ավելացան ֆինանսատնտեսական բնույթի բազմաթիվ այլ գործոններ: Այսպես, 1967 թ. արժութային ճգնաժամի սկիզբը համընկավ տնտեսական աճի դանդաղելու հետ: Տարբեր երկրներում գնաճի տարբեր տեմպերը ազդեցին արժույթների փոխարժեքների դինամիկայի վրա, իսկ փողի գնողունակության նվազումը պայմաններ ստեղծեց «փոխարժեքի շեղումների» համար: Որոշ երկրների (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ) հաշվեկշիռների պարբերական պակասուրդը և մյուսների (Գերմանիա, Ճապոնիա) դրական հաշվեկշիռը ուժեղացրին փոխարժեքների կտրուկ տատանումները: Նկատվեց վճարային հաշվեկշիռների անկայունության աճ, որն արտահայտվեց դրանց պարբերական պակասուրդով՝ չնայած ԱՄՆ-ի կոշտ արտաքին կարգավորմանը: Բրեթոն Վուդսի համակարգի հակասություններն ուժեղացան ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի տնտեսական դիրքերի թուլացմանը զուգահեռ, որոնք իրենց վճարային հաշվեկշիռների պակասուրդը մարում էին ազգային արժույթների նոր ծավալներով՝ չարաշահելով դրանց պահուստային լիներու կարգավիճակը: Արդյունքում խարխլվեց պահուստային արժույթների կայունությունը: Անդրազգային կորպորացիաները (ԱԱԿ) տիրապետում էին հսկայական չափի կարճաժամկետ ակտիվների տարբեր արժույթներով, որոնք զգալիորեն գերազանցում էին այն երկրների կենտրոնական բանկերի արժութային պահուստները, որոնցում տեղակայված էին ԱԱԿ-ների գլխավոր գրասենյակները: Այս գումարները ազգային վերահսկողությունից դուրս էին, և ԱԱԿ-ները իրենց շահույթ հետապնդող գործունեության մեջ օգտագործում էին դրանք հսկայական չափերի հասնող արտարժույթի սպեկուլյացիաներում:

Բրեթոն Վուդսի արժութային համակարգը փաստացի դադարեց գոյություն ունենալուց 1971 թ., երբ օտարերկրյա կառավարությունների համար դադարեցվեց ԱՄՆ դրլարի ոսկով փոխանակումը: 1972 թ. ԱՄՆ կառավարիչների խորհուրդը ձևավորեց հատուկ կոմիտե՝ Բրեթոն Վուդսի արժութային համակարգի թույլ կողմերը բացահայտելու և դրանք վերացնելու համար:

Կոմիտեն առանձնացրեց երեք հիմնական խնդիր: *Բրացվելիության հիմնախնդիր*. համակարգը չէր կարողանում ապահովել միջազ-

⁵ St' u Международные валютно-кредитные и финансовые отношения / под ред. Л. Н. Красавиной. М.: Финансы и статистика, 2000, էջ 50:

գային առևտրի և ֆինանսական գործառնությունների համար անհրաժեշտ դրամական միջոցների ծավալը, քանզի ԱՄՆ ոսկու պաշարները սահմանափակ էին: *Ֆինանսական հոսքերի բալանսավորման հիմնախնդիր*. համակարգը չուներ վճարային հաշվեկշիռը կարգավորելու գործող և արդյունավետ մեխանիզմ, երկրների անկարողությունը կամ չցանկանալը փոխել արժույթների անվանական արժեքը, խախտում էր արտաքին վճարումների հավասարակշռությունը: *Վստահության հիմնախնդիր*. երբ օտարերկրյա դրամատերերի և առաջին հերթին երկրների կենտրոնական բանկերի մոտ կուտակված ԱՄՆ դոլարի քանակը սկսեց զգալիորեն գերազանցել ԱՄՆ ոսկու պաշարների արժեքը, պարզ դարձավ, որ ԱՄՆ-ն այլևս չի կարող պահել դոլարի արժեքը նախկին մակարդակի վրա: Այնուամենայնիվ, Բրեթոն Վուդսի արժույթային համակարգը գործեց մինչև 1978 թվականը, երբ այն փոխարինվեց Ճամայկայի արժույթային համակարգով:

Ճամայկայի արժույթային համակարգի հիմնադրույթները հաստատվեցին 1976 թվականի հունվարին Քինգսթոնում (Ճամայկա) կայացած ԱՄՆ համաժողովում: Կարգավորման կանոններն ու սկզբունքները վերջնականապես ամրագրվեցին 1978 թվականին, երբ ձայների մեծամասնությամբ վավերացվեցին ԱՄՆ կանոնադրության փոփոխությունները⁶:

Պաշտոնապես չեղարկվեց ոսկու ստանդարտը, ոսկին վերածվեց սովորական ապրանքի: Արժույթները, այդ թվում՝ ԱՄՆ դոլարը, այլևս չէին պայմանավորվում ոսկու գնով և ոսկով չէին փոխանակվում: Կենտրոնական բանկերը կարող էին ոսկի գնել և վաճառել շուկայական գներով: Ոսկու ստանդարտից ամբողջապես հրաժարվելը հիմք դարձավ արժույթային նոր համակարգի և 20-րդ դարի ամենակարևոր մակրոտնտեսական հայտնագործություններից մեկի համար: Սակայն, չնայած այն բանին, որ ոսկին դարձավ սովորական ապրանք, աշխարհի առաջատար երկրների կենտրոնական բանկերը շարունակում էին պահել այս մետաղի բավականին մեծ պաշարներ:

Երկրները ինքնուրույն էին որոշում, թե ինչպիսին պիտի լինի իրենց արժույթի փոխարժեքը՝ ազատ փոխարկելի, լողացող միջակայքի շրջանակում, թե՛ ամուր կապված այլ արժույթի կամ արժույթների զամբյուղի հետ: Երկրների կենտրոնական բանկերն այլևս պարտավոր չէին պահպանել ֆիքսված փոխարժեքները: Այնուամենայնիվ, կենտրոնական բանկերը անհրաժեշտության դեպքում կարող էին իրականացնել արտարժույթի միջամտություններ՝ ազգային արժույթի փոխարժեքը կայունացնելու համար: Երկրների մեծ մասը ընտրեց ազգային արժույթի լողացող փոխարժեքը, որի պարագայում արժույթի ար-

⁶ See 'u' Статьи и соглашения международного валютного фонда (1978, 1 апреля) / Вашингтон, округ Колумбия: Международный валютный фонд, 2011 – <https://www.imf.org/external/pubs/ft/aa/rus/index.pdf>

ժեքը որոշվում է առաջարկի և պահանջարկի միջոցով:

Փաստացի պահուստային արժույթներ մնացին ԱՄՆ դոլարը, բրիտանական ֆունտ ստեռլինգը, շվեյցարական ֆրանկը, ճապոնական իենը, գերմանական մարկը և ֆրանսիական ֆրանկը: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում ոսկու և արտարժույթի ստանդարտը վերափոխվեց թղթի և դոլարի ստանդարտի, որի պարագայում բոլոր երկրները, բացառությամբ ԱՄՆ-ի, ստանձնեցին ռիսկային պարտավորություններ՝ պահպանելու արժույթային նոր փոխարժեքները: Տարերայնորեն կյանքի կոչվեց լողացող փոխարժեքների պրակտիկան, և Բրեթոն Վուդսի արժույթային համակարգը դադարեց գործելուց:

Ըստ մտահղացման՝ ճամայկայի արժույթային համակարգը պետք է ավելի ճկուն դառնար, քան Բրեթոն Վուդսինը և ավելի լավ հարմարվեր վճարային հաշվեկշիռների և ազգային արժույթների փոխարժեքների անկայունությանը: Ընդ որում, չնայած ԱՄՆ դոլարի՝ որպես հիմնական վճարամիջոցի կարգավիճակը պաշտոնապես վերացնելուն՝ դոլարը գրեթե միշտ մնաց միջազգային հաշվարկների հիմնական արժույթը, ինչը պայմանավորված էր այլ երկրների համեմատ Միացյալ Նահանգների տնտեսության հզորությամբ:

Ստեղծված համակարգի էությունն այն էր, որ որոշվեց համաշխարհային ֆինանսական համակարգի երկարաժամկետ զարգացման վեկտորը. այն ուղղված էր ամերիկյան դոլարի շրջանառության գոտու ընդլայնմանը: Սկզբնական փուլում այս գոտին սահմանափակվում էր համաշխարհային սոցիալիստական ճամբարի գոյությամբ, որը ֆինանսատնտեսական առումով զգալիորեն մեկուսացած էր արևմտյան երկրներից: Սակայն հետագայում՝ հատկապես Խորհրդային Միության փլուզումից հետո, ԱՄՆ-ն դարձավ լիիրավ «համաշխարհային հեգեմոն» ոչ միայն ֆինանսատնտեսական ոլորտում, այլև համաշխարհային հանրության հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ դրանով իսկ նշանավորելով միաբևեռ աշխարհի շրջափուլի սկիզբը:

Որպես ազդեցության լծակ՝ ԱՄՆ-ն սկսեց օգտագործել հենց մոնետարիստական քաղաքականության գործիքները, ինչը դարձավ համաշխարհային տնտեսության գործառնության հիմքը, և մնացած բոլոր երկրները պարտադրված եղան հետևելու հենց մոնետարիզմի տրամաբանությանը: Այն օգնեց ԱՄՆ-ին ոչ միայն լիակատար վերահսկողություն հաստատելու համաշխարհային ֆինանսական համակարգի և տնտեսության նկատմամբ, այլև ապահովելու բարեկեցության բարձր մակարդակ իր քաղաքացիների և ներքին սպառման համար՝ հիմնականում համաշխարհային ռեսուրսները վերաբաշխելու միջոցով:

Ինչպես տեսնում ենք, մոնետարիստական հայեցակարգը թույլ է տալիս ֆինանսական սուբյեկտներին, օգտագործելով փողի զանգված թողարկելու և զեղչային դրույքաչափերը որոշելու իրենց իրավունքները, գրեթե ամբողջությամբ կարգավորել հասարակական կյանքի

տնտեսական ոլորտը: Եվ դա դեռ ինքնիշխան պետությունների շրջանակներում: Կարելի է միայն կռահել, թե ինչ հնարավորությունների է տիրապետում համաշխարհային քաղաքականության սուբյեկտը, որի ձեռքում է աշխարհում ամենագործածական պահուստային արժույթի տպագրական մեքենան: ԱՄՆ-ում դրամավարկային քաղաքականության կարգավորիչը Դաշնային պահուստային համակարգն է, որը տնօրինում է երկրի ողջ ֆինանսական ոլորտը: Եթե հաշվի առնենք, որ այն մասնավոր կազմակերպություն է, ապա հասկանալի է դառնում, թե որքան սահմանափակ է ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ամբողջ աշխարհի ֆինանսավարկային քաղաքականության ոլորտում որոշումներ կայացնողների շրջանակը:

Նման համակարգը ի վիճակի է լուծելու ԱՄՆ-ի ֆինանսական և տնտեսական գրեթե բոլոր ներքին խնդիրները, որոնք առաջանում են երկրի առջև տարբեր ճգնաժամային փուլերում և, ինչը շատ կարևոր է, ապահովելու սոցիալական կայունություն հասարակության մեջ: Չէ՞ որ դուրային թղթադրամների մշտական անհրաժեշտությունն աշխարհում զգալիորեն թանկացնում է այդ արժույթը, այն դարձնում պահանջված և խթանում է ակտիվ դրամաշրջանառությունը: Հետևաբար՝ այս արժույթի նոր խմբաքանակներ շրջանառության մեջ դնելը չի հանգեցրել գնաճային գործընթացների: Միացյալ Նահանգները երկար ժամանակ լայնորեն օգտագործում էին այս հանգամանքը ինչպես տնտեսավարող սուբյեկտներին վարկավորելու, այնպես էլ երկրի քաղաքացիներին սպառողական (գործնականում անվերադարձ) վարկեր տրամադրելու համար, ինչը, ի վերջո, ապահովում էր սպառման խթանումն ու բնակչության բարեկեցության բարձր մակարդակը:

Այս ամենին գումարվեց ԱՄՆ-ի կողմից վերահսկվող միջազգային հաշվարկների համակարգի SWIFT-ի ներդրումը, որն ապահովում է երկրի բյուջեն աշխարհում իրականացվող ֆինանսական գործառնություններից ստացված դրամական միջոցների մշտական ներհոսքով: Հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ գործող համաշխարհային ֆինանսական համակարգի շրջանակներում ստեղծված գործնականում բոլոր միջազգային ֆինանսական կազմակերպությունները ևս, ըստ էության, գտնվում էին ամերիկյան Կենտրոնական բանկի հաշվեկշռում:

Սակայն ֆինանսական նման համակարգը լիովին համապատասխանում էր 20-րդ դարի 90-ականներին հաստատված միաբնեռ աշխարհակարգին: Համաշխարհային առևտրում ներգրավված բոլոր երկրները հետևեցին համաշխարհային ֆինանսական համակարգի սահմանած մոնետար սկզբունքներին, որոնք չէին կարող չսահմանափակել իրենց ինքնիշխանությունը որոշումներ կայացնելիս ինչպես տնտեսության, այնպես էլ քաղաքականության, հատկապես աշխարհաքաղաքականության ոլորտներում: Ուստի համաշխարհային քաղաքականության որոշ ակտորների ուժեղացմանը զուգընթաց, օրի-

նակ՝ Ռուսաստանի և Չինաստանի, որոնք ձգտում են ամրապնդել իրենց ինքնիշխանությունը, գլոբալ հարացույցի տնտեսական հիմքերը խարխլվեցին, ինչը չէր կարող չանդրադառնալ համաշխարհային քաղաքական իրավիճակի սրման վրա:

Մեր կարծիքով, նման սրացման պատճառները բխում են ներկայումս օբյեկտիվորեն տեղի ունեցող համաշխարհային տնտեսական կացութաձևի փոփոխությունից (ՀՏԿ): ՀՏԿ-ի հիմնախնդիրը դարձել է մասնավորապես ռուս հետազոտողների մի խմբի քննության առարկա, որը գիտական վարկած է ձևակերպել «համաշխարհային տնտեսական համակարգի զարգացման մեջ աշխարհատնտեսական կացութաձևերի փոփոխման և դրանց հետ կապված քաղաքական փոփոխությունների օրինաչափության մասին»⁷: Ընդ որում, խմբի անդամների կարծիքով, ՀՏԿ-ի փոփոխման գործընթացը կարող է ուղեկցվել միջազգային ապարեզում լուրջ կատակլիզմներով: Աշխարհատնտեսական կացութաձևի հասկացությունը սահմանվում է որպես միջազգային և ազգային ինստիտուտների փոխկապակցված համակարգ, որն ապահովում է տնտեսության ընդլայնված վերարտադրությունը և որոշարկում գլոբալ տնտեսական հարաբերությունների մեխանիզմը: Առաջնային է առաջնորդ երկրի ինստիտուտների դերը, որոնք գերիշխող ազդեցություն են ունենում միջազգային առևտրատնտեսական ու ֆինանսական հարաբերությունները կարգավորող հաստատությունների վրա:

ՀՏԿ-ի փոփոխության ժամանակահատվածներում՝ հին աշխարհակարգի ոչնչացման և նորի ձևավորման ընթացքում, տեղի է ունենում միջազգային հարաբերությունների համակարգի կտրուկ ապակայունացում: Արդեն իսկ սպառվում են ինստիտուտների և տեխնոլոգիաների արդի համակարգի հիման վրա սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները: Միևնույն ժամանակ, համաշխարհային տնտեսական համակարգում հայտնվում է նոր առաջնորդ կամ երկրների խումբ՝ տնտեսության զարգացման կառավարման ավելի արդյունավետ համակարգով: Նոր կենտրոնն առաջ է անցնում տեխնոլոգիական կառուցակարգի կարևորագույն ուղղություններում՝ հենվելով արտադրական հարաբերությունների նոր համակարգի՝ ռեսուրսները կենտրոնացնելու և մարդկային ներուժը ակտիվացնելու ունակության վրա: Մասնավորապես, ՉՖՀ-ի և Հնդկաստանի սոցիալ-տնտեսական հաջողությունները արդեն կարող են վկայել նոր աշխարհատնտեսական կացութաձևի ձևավորված միջուկի մասին: Վերջին տասնամյակում ոչ պակաս կարեվոր դեր է խաղում նաև Ռուսաստանը, թեև արդեն ոչ թե տնտեսական, այլ առաջին հերթին ռազմաքաղաքական և էներգետիկ ոլորտներում:

⁷ Свидетельство № 41-Н о регистрации Международной академией авторов научных открытий и изобретений под научно-методическим руководством Российской академии естественных наук; Глазьев С. Последняя мировая война. США начинают и проигрывают. – М.: Книжный мир, 2016.

Նման պայմաններում անխուսափելի է դառնում համաշխարհային տնտեսական զարգացման ապակենտրոնացման գործընթացը, որն այժմ ուղեկցվում է հիբրիդային պատերազմով ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային ուժային կենտրոնների միջև⁸: Ժամանակակից համաշխարհային պատերազմի հիբրիդային բնույթը, այլ առանձնահատկություններից գատ, դրսևորվում է երկրների միջև ռազմաճակատային առաջնագծերի բացակայությամբ: Քաղաքական, տեղեկատվական և արժույթաֆինանսական հարթություններում բախումները հաճախ տեղի են ունենում այն երկրներում, որոնք պառակտված են իշխող էլիտայի և ժողովրդի միջև անհաշտ հակասությունների պատճառով:

Իրավիճակը սրվում է նաև այն պատճառով, որ նախկին համաշխարհային առաջնորդը ներկա փուլում լավագույն ժամանակները չի ապրում: Ամերիկյան տնտեսության վիճակի բոլոր կանխատեսող ցուցանիշները վկայում են ստագֆլյացիայի դրսևորումների մասին: Ամերիկյան տնտեսության այս իրավիճակին գումարվում է ֆինանսական շուկայի վիճակի կտրուկ վատթարացումը⁹, որը ժամանակավորապես որոշ չափով մեղմվել էր դեռևս 2020 թվականին կորոնավիրուսային համաճարակի պատճառով:

Վերջին տարիներին ԱՄՆ-ում ավելի ու ավելի սուր են արտահայտվում ամերիկյան հասարակության սոցիալական տարբեր խմբերի միջև հակադրությունները: Իրավիճակը սրվում է առաջին հերթին գաղափարական և արժեքային բովանդակության այնպիսի տարածանությունների հետևանքով, որոնք կարող են հանգեցնել զրոյական արդյունքով կոնֆլիկտների առաջացմանը: Երկու արժեհամակարգերի պայքարին դաժանություն կարող է հաղորդել հասարակության չափից դուրս զինված լինելը հրաձգային գենքով, որի քանակը 1,2 անգամ գերազանցում է ԱՄՆ-ի բնակչության թվին¹⁰: Ամերիկյան հասարակությունը նաև խիստ պառակտված է ինչպես երկրում ժողովրդավարության իրական մակարդակի, այնպես էլ դրանում անցկացվող ընտրությունների նկատմամբ իր վերաբերմունքով: ԱՄՆ-ի քաղաքականապես ակտիվ շատ քաղաքացիների մտքում թևածում է անգամ քաղաքացիական պատերազմի սպասումը:

Ավելի լավ վիճակում չէ տնտեսությունը նաև Եվրոպական միությունում: Շատ ոլորտներում զիջելով Չինաստանին և Հնդկաստանին՝ ԵՄ-ն լրացուցիչ դժվարությունների է առնչվում հակառուսական

⁸ Տե՛ս **Khojayan K.** Reflections on the Transformation of the World Order: Emerging Trends and Impending Perspectives // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(2), 2022, էջ 98-99. <https://doi.org/10.46991/JOPS/2022.1.2.092>.

⁹ Տե՛ս Назад в прошлое. На Уолл-стрит ожидают повторения стагфляции 1970-х // «РБК» – <https://quote.rbc.ru/news/article/6221eca49a794712c67f8bad>

¹⁰ Տե՛ս Количество единиц оружия в США на 67 млн превысило численность населения // «РБК» – <https://www.rbc.ru/rbcfreenews/5b29bbd69a79479de93bdd81>

պատժամիջոցների պատճառով, որոնք պայմանավորված են ուկրաինական ճգնաժամով: Ռուսաստանի հետ ներմայրցամաքային առևտրի խորը կապվածության պատճառով եվրոպական երկրների մակրոտնտեսական դինամիկան կտրուկ վատթարացել է: Գնաճը 2022 թվականին հասել է 9.2 տոկոսի¹¹: ԵՄ երկրների բնակչության մակարդակը և կյանքի որակը կտրուկ նվազել են՝ խորացնելով միգրացիոն և կորոնավիրուսային համավարակի ճգնաժամերի հետևանքները: Եվրոպական տնտեսության վրա խիստ բացասաբար է ազդում ռուսական շուկայի կորուստը:

Ռուսաստանին հնարավորինս առավելագույն չափով վնաս հասցնելու ձգտումից ելնելով¹², ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան և ԵՄ ղեկավարությունը նսեմացրել են իրենց գլխավոր խաղաքարտերը՝ համաշխարհային արժույթների թողարկման մենաշնորհը, օրինակելի իրավական ժողովրդավարական պետության իմիջը, հավատը մասնավոր սեփականության «սրբազան» իրավունքի նկատմամբ: Դրանով իսկ նրանք իրենցից անկախ բոլոր երկրներին ստիպեցին փնտրել համաշխարհային արժույթային նոր գործիքներ, ռիսկերի ապահովագրության նոր մեխանիզմներ, ինչպես նաև ստեղծել միջազգային իրավունքի նորմերի վերականգնման և տնտեսական անվտանգության սեփական համակարգեր¹³:

Նախորդ տարիներին Իրանի, Իրաքի, Լիբիայի, Վենեսուելայի, Աֆղանստանի ակտիվների, իսկ Ուկրաինայում հատուկ ռազմական գործողության մեկնարկից հետո նաև Ռուսաստանի պետական միջոցների սառեցումն ու բռնագրավումը ստիպեցին մյուս պետություններին մտորել իրենց արժույթային պահուստների ապահովության մասին: Անկախ պետությունները արդեն սկսել են հրաժարվել դոլարային ակտիվներից, ինչպես նաև փորձում են փոխադարձ առևտրում փոխարինել դոլարն ու եվրոն:

Փետրվարից մայիս ոչ ռեզիդենտների կողմից ամերիկյան թրեժերիսների (ԱՄՆ տասնամյա պետական պարտատոմսերի) անմիջական վաճառքը կազմել է ռեկորդային 300 մլրդ դոլար¹⁴: Ամերիկյան դոլարի և դրա հետ կապված պահուստային արժույթների օգտագործումից հրաժարվելու միտումը կարող է ճակատագրական դառնալ ոչ միայն ամերիկյան ֆինանսական համակարգի, այլև ամբողջ համաշխարհային

¹¹ Տե՛ս Инфляция в еврозоне в декабре замедлилась до 9,2%, минимума за 4 месяца // «Интерфакс» – <https://interfax-ru.turbopages.org/interfax.ru/s/business/879766>

¹² Ավելի մանրամասն տե՛ս u Timushev E. Drivers of Fiscal Resources at the Local Level in Russia: Role of Institutions Reflected in Regional Debt // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(3), 2022, էջ 60-72. <https://doi.org/10.46991/JOPS/2022.1.3.060>.

¹³ Տե՛ս u Aleksanyan N. Mapping Political Populism in the European Post-Transitional Periphery // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(2), 2022, էջ 73-91. <https://doi.org/10.46991/JOPS/2022.1.2.073>.

¹⁴ Տե՛ս u Авторский доклад Изборскому клубу академика Глазьева // «Аврора» – <https://aurora.network/articles/11-analitika-i-prognozy/106003-chto-proiskhodit>

շուկայի համար: Դրանով իսկ նախադրյալներ կստեղծվեն գլոբալ հարացույցի ֆինանսատնտեսական բաղադրիչի վերափոխման համար:

ПАЙЛАК ЕНГОЯН – *Финансово-экономическая основа парадигмы глобального развития.* – Современная парадигма глобального развития отличается ярко выраженным неолиберальным содержанием, где основной акцент ставится на либеральные ценности, обеспечение максимальной индивидуальной свободы, принятие западной модели демократии, а также на нормы поведения, основанные на рыночных отношениях. При этом подчеркивается особая роль финансово-экономической политики в определении вектора глобального развития. Бреттон-Вудская и Ямайская валютные системы стали основой для данной парадигмы. На фоне усиления некоторых акторов мировой политики формируются предпосылки для преобразования однополярного мира в многополярный, что стимулирует трансформацию вектора глобального развития. Исчерпываются возможности социально-экономического развития на основе сложившейся системы институтов и технологий. Новые альтернативные центры силы опираются на способность новой системы производственных отношений сконцентрировать ресурсы и активизировать человеческий потенциал на прорывных направлениях нового технологического уклада.

Ключевые слова: *парадигма глобального развития, монетаризм, кейнсианство, многополярный мир, Бреттон-Вудская финансовая система, мультивалютная мировая финансовая система, мирохозяйственный уклад, мировые центры силы*

PAYLAK ENGOYAN – *The Financial and Economic Basis of the Global Development Paradigm.* – The modern paradigm of global development is characterized by a pronounced neoliberal content, where the main emphasis is placed on liberal values, ensuring maximum individual freedom, accepting the Western model of democracy, as well as norms of behavior based on the market relations. At the same time, the special role of financial and economic policy is emphasized in determining the vector of global development. The Bretton Woods and Jamaican monetary systems became the basis for this paradigm. On the background of the strengthening of some actors in world politics the prerequisites are being formed for the transformation of a unipolar world into a multipolar one, which stimulates the transformation of the vector of global development. The possibilities of socio-economic development based on the existing system of institutions and technologies are being exhausted. New alternative centers of power are based on the ability of the new system of production relations to concentrate resources and activate human potential in the breakthrough directions of the new technological order.

Key words: *paradigm of global development, monetarism, Keynesianism, multipolar world, Bretton Woods financial system, multi-currency world financial system, world economic structure, world centers of power*

ԷՐԴՈՂԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՊԵԿՏ

ԳԱՐԻԿ ՔԵՈՅԱՆ

Եթե մեկ նախադասությամբ բնութագրենք արդի միջազգային իրադրությունը, թերևս առավել դիպուկ կլինի «անկանխատեսելի գլոբալ միջավայր» արտահայտությունը: Այս խառը, անհասկանալի, երբեմն էլ անտրամաբանական աշխարհաքաղաքական զարգացումներով հագեցած իրականության մեջ բավականին առանձնահատուկ քաղաքական վարքագիծ են դրսևորում Թուրքիայի երկարամյա ղեկավար (2003 թ.-ից վարչապետ, 2014 թ.-ից նախագահ) Էրդոդանը և նրա մերձավորագույն իշխանական թիմը: Նրանք ուղղակի փայլում են հմուտ դիվանագիտությամբ¹:

Հարաբերությունների կարգավորումը տարածաշրջանի հարևան պետությունների հետ հայկական պետության պահպանման առաջնային խնդիրներից է, որն էլ հրամայաբար թելադրում է ճկունություն դիվանագիտության մեջ և հակառակորդների պետական ղեկավարների կարողությունների ճանաչում ու գնահատում: Այս առումով Էրդոդանի դիվանագիտության առանձնահատկությունների և կիրառման դրսևորումների հետազոտությունը արդիական նշանակություն ունի:

Բանալի բառեր – Էրդոդան, դիվանագիտություն, արտաքին քաղաքականություն, ռուսական գործոն, Ուկրաինա, Պուտին, Ֆինլանդիա, Շվեդիա, ՆԱՏՕ-ի ընդլայնում

Էրդոդանի քաղաքական վարքագիծը

Ներկա պահին Էրդոդանը կարևոր դերակատարում և ազդեցություն ունի միջազգային հարթակներում: Նա ուշադրության կենտրոնում էր և՛ Սամարղանդում՝ Շանհայի համագործակցության ֆորումում, և՛ Պրահայում՝ 2022 թ. Համաեվրոպական քաղաքական համաժողովում: Երկու բևեռներում էլ նա հարգված է, և նրա կարիքը զգում են բոլոր հարթակներում: Թուրքիան արժեքավոր դաշնակից է բոլոր միջազգային ուժեղ դերակատարների համար: Նա մշակել է հացահատիկային գործարքը և մասնակցել Շանհայի համագործակցության կազմակեր-

¹ Տե՛ս մեր հրապարակումը Զորավար Սեպուհ պատմաքաղաքական վերլուծական կայքում, <https://generalnews.am/hy/article/7787ba9aa6e4ae662844adbb80ce310c>, **Գ. Քեռյան**, Ռուս-թուրքական հարաբերությունների նոր միտումները 2017թ. // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն 9 (1 (25)), 2018, էջ 18-26.

պության Մամարդանդի գազաթնածողովին, թեև նրան հրավիրել են որպես «երկխոսության գործընկեր», և ոչ թե անդամ: Հունաստանի հետ լինելով ՆԱՏՕ-ի կազմում՝ սպառնում է վիճելի հարցերը լուծել ռազմական ուժով: Նույն ոգով արտահայտվել է նաև Հայաստանի հասցեին սեպտեմբերյան մարտերի ժամանակ: Պրահայում հանդիպեց ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի հետ, և համոզված ենք, որ կրկին զգուշացումների լեզվով է խոսել: Այժմ, բացի Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունից, Թուրքիայի փաստացի մաս կարելի է համարել Միրիայի գրեթե ամբողջ հյուսիսը, որտեղ գործում է թուրքական լիրան, թուրքերեն են դասավանդում, իսկ անհավատարիմ քուրդ բնակչությունը աստիճանաբար փոխարինվում է չեզոք թուրքմաններով և սուննի արաբներով: Առայժմ Էրդոդանն այդ գործողությունները բացատրում է վերահսկողության տակ գտնվող տարածքներում կարգուկանոնի վերականգնմամբ, որպեսզի իբր օգնի միլիոնավոր սիրիացի փախստականներին՝ վերադառնալու հայրենիք: Բայց քանի որ աշխարհում սահմանների նոր վերանայում է սկսվել, և Էրդոդանը դիմավորում է այն ձիու վրա, ապա ոչինչ չի խանգարի նրան ամրապնդվել այդ հողերում: Դա կլինի պրոտեկտորատների² ինչ-որ իրավական ամրագրում կամ ուղղակի անեքսիա³:

Հնարավոր են նաև այլ տարբերակներ: Օրինակ՝ Անկարայի նորահայտ ինքնավստահությունը կարող է դրսևորվել Կովկասում, որտեղ պայքար է ընթանում Հայաստանի միջով «Ջանգեզուրի միջանցքի» համար, որը պետք է դյուրացնի հաղորդակցությունը Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Կամ Միջերկրական ծովում, նավթահանքերի համար, կամ էլ Աֆրիկայում, որտեղ նույնպես տեղի է ունենում ազդեցության ոլորտների նոր վերաբաշխում:

Ռուսաստանի Ուկրաինա ներխուժումից ի վեր՝ Թուրքիան վարում է հավասարակշռված քաղաքականություն և փորձում է իր ազդեցությունն օգտագործել երկու երկրների միջև շփումները հեշտացնելու համար: Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոդանը տարիներ շարունակ ձգտել է մեկ ոտքով մնալ ՆԱՏՕ-ի ճամբարում, իսկ մյուսով՝ Ռուսաստանի: 2019 թվականի հուլիսին C-400 ռուսական հակաօդային պաշտպանության համակարգի գնումը, որն ուղղակի չտեսնված գործարք էր ՆԱՏՕ-ի անդամ պետության պարագայում, և նույնիսկ տեսականորեն դժվար էր դա պատկերացնել: Հիմա իրավիճակն ավելի է բարդացել, որովհետև զորահավաքը Ռուսաստանում և նախագահ Վլադիմիր Պուտինի հնչեցրած սպառնալիքները, որ կարող է միջուկա-

² Տե՛ս <https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/turetskie-protectoraty-v-sirii-upravlenie-i-integratsiya/>, **Գ. Քեռյան**, Հավաքական անվտանգության գաղափարի և պրակտիկայի էվոլյուցիան միջազգային հարաբերություններում // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն 6 (3 (18), 2015, էջ 48-59:

³ Տե՛ս <https://ria.ru/20210608/turkization-1736042964.html>

յին զենք կիրառվել, դժվարացնում են Թուրքիայի արտաքին քայլերը, բայց Անկարան կարողանում է նույնիսկ այս ճգնաժամային պահերն օգտագործել իր հեղինակության բարձրացման համար, որն ի վերջո Թուրքիան դարձրել է հզոր գործոն միջազգային հարթակներում:

Թուրքական մեդիան և դիվանագիտական աշխատակազմերը աստվածացնում են Էրդողանի խաղաղապահ դերը և նրա համագործակցությունը Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի հետ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև հացահատիկային գործարքի շուրջ: Թուրքիան չի միացել Ռուսաստանի դեմ կիրառվող արևմտյան պատժամիջոցներին, ֆինանսական փոխանցումներ է ընդունում ռուսական ընկերություններից և ֆինանսական գործարքներ է կնքում Ռուսաստանի և ռուսական նավթային օպերատորների հետ, որպեսզի թեթևացնի Թուրքիայի ֆինանսական խնդիրները: Միաժամանակ առանց կաշկանդվելու Թուրքիան շարունակում է Կիևին մատակարարել «Բայրաքթար» անօդաչու սարքեր: Իհարկե, որոշ տեղերում լինում են նաև ճկունության ձախողումներ: Օրինակ՝ Եղիսաբեթ թագուհու հողարկավորության ժամանակ Էրդողանի բացակայությունը կամ ՄՄԿ-ում նախագահ Ջո Բայդենի հետ հանդիպելու նրա ցանկության ձախողումը:

Էրդողանը հմուտ մանևրում է նաև հիմա, երբ իրավիճակը համաշխարհային ասպարեզում կտրուկ վատացել է Ռուսաստանի կողմից ուկրաինական մարզերում անցկացված հանրաքվեների և ՌԴ տարածքային ընդլայնման մասին որոշումներից հետո: Նա շատ լավ ըմբռնում է Կրեմլի նոր ռազմավարությունը, որը ոչ այլ ինչ է, քան գլոբալ գործերում խաղի կանոնների լայնածավալ փոփոխություն: Աշխատում է օգտվել զանգվածային ոչնչացման զենք կիրառելու սպառնալիքից, որն արևմտյան երկրներին ստիպում է խստացնել պատժամիջոցները և ավելացնել ռազմական աջակցությունն Ուկրաինային: Իրատեսորեն գնահատում է Բայդենի վարչակազմի, Ֆրանսիայի, Միացյալ Թագավորության ու ՆԱՏՕ-ի ռազմավարությունների փոփոխության հետևանքները, Չինաստանի ու Հնդկաստանի քաղաքական հայտարարությունների ենթատեքստը:

Մարտահրավերներ

Էրդողանի արտաքին քաղաքականությունում լուրջ փորձություններ են սպասվում: Մոսկվայի դիրքորոշման կարծրացումը ևս մեկ անմիջական ազդեցություն ունեցավ, քանի որ զգալիորեն բարդացրեց Էրդողանի՝ որպես միջնորդի դերը: Թուրքիան, անկասկած, նույնպես ստիպված կլինի վերանայել իր քաղաքականությունը: Մասնավորապես, Թուրքիայի համար Պուտինի նոր սպառնալիքները չարաբաստիկ հետևանքներ կարող են ունենալ: Եթե Ռուսաստանը որոշի ՆԱՏՕ-ի

տարածքի մի մասի դեմ փաստացի կիրառել մարտավարական միջուկային զենք (կամ ցանկացած այլ զանգվածային ոչնչացման զենք), Անկարան պարտավոր է Հյուսիսատլանտյան պայմանագրի 5-րդ հոդվածի համաձայն («հարձակումը մեկի վրա հարձակում է բոլորի վրա») կատարել իր դաշնակցային պարտավորությունները, և հետևաբար Էրդողանի հավասարակշռված քաղաքականությունը կարող է ճաքեր տալ: Հիշենք, որ Անկարան նախկինի պես լուրջ կախվածություն ունի Կրեմլից ռազմական, ֆինանսական, տուրիստական, առևտրային ու էներգետիկ ոլորտներում և հացահատիկի գործարքի իրականացման ընթացքից: Միաժամանակ Էրդողանի դիրքորոշումը հարցեր է առաջացրել Բրյուսելում և Վաշինգտոնում. խոսքը Պուտինի հետ նրա «մտերմության» մասին է, որը բավականին տհաճ սառնություն է մտցրել արևմտյան լիդերների հետ հարաբերություններում:

Մյուս տարածաշրջաններից Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ կենտրոնական տեղ են զբաղեցնում Միջերկրական ծովի արևելյան հատվածը, Մերձավոր Արևելքը, գումարած Կիպրոս, Հունաստան, Իսրայել, Եգիպտոս, Լիբանան, Լիբիա, Պաղեստին և Միրիա ընդգրկող շրջանակը: Այս ուղղություններում խնդիրները մնում են կարևոր, բայց դրանք ակամա երկրորդ պլան են մղվել Ռուսաստան-Արևմուտք հակամարտության և դրանից բխող վերջին սպառնալիքների պատճառով: Արդյունքում, Թուրքիայի՝ հարևան երկրների վրա ազդելու կամ սեփական շահերը հետապնդելու կարողությունը նվազել է: Երբեմն Էրդողանին ցանկանում են պատժել նույնիսկ նրա նատոյական «դաշնակիցները», մասնավորապես՝ Ֆրանսիան և Հունաստանը: Շարունակվում են թուրք-հունական դարավոր թշնամությունն ու տարածքային վեճերը: Թուրքիայի և Հունաստանի միջև հակամարտությունը սրվել է 2022 թ. գարնանը Էգեյան ծովի արևելյան մասում կղզիների կարգավիճակի շուրջ տարաձայնությունների պատճառով: Կղզիները Հունաստանին են անցել 1923 թվականի Լոզանի պայմանագրով: Հունիսին Էրդողանը Հունաստանին մեղադրել էր կղզիների տարածքում գորավարժություններ անցկացնելու համար: Հունաստանը, ի պատասխան իր կղզիների ինքնիշխանության սպառնալիքների, նշել էր, որ չի համաձայնի սահմանների վերանայմանը: Իր հարևանին պատժելու համար թուրքական իշխանությունները դեպի Հունաստան են ուղղում տասնյակ հազարավոր ներգաղթյալների, որին ի պատասխան՝ հույները չորս մետրանոց բաժանիչ պատ են կառուցում ցամաքային սահմանին⁴:

Թուրքիան հիմա ավելի խիստ իրողությունների է բախվում: Երկիրը նախկինի պես մեծապես կախված է արևմտյան երկրների, հատկապես Եվրամիության հետ տնտեսական հարաբերություններից:

⁴ Տե՛ս https://news.mail.ru/politics/54567714/?from_maillist=daily_main

Ռուսաստանը կամ Պարսից ծոցի երկրները կարող են նրան միայն սահմանափակ ֆինանսական աջակցություն առաջարկել: Նրա համառ դիրքորոշումը Կիպրոսի, Հունաստանի կամ Սիրիայի վերաբերյալ առարկություններ է առաջացրել արևմտյան հանրության և Ռուսաստանի կողմից: Մի դեպքում, ըստ լուրերի, Սիրիայի հյուսիս-արևելքում հինգերորդ ռազմական գործողության դեմ Կրեմլի առարկությունները Թուրքիային դրդել են հետախուզության պետին Դամասկոս ուղարկել՝ հազվադեպ բարձր մակարդակի շփումների համար: Անհնար է կանխատեսել նման քննարկումների կարճաժամկետ արդյունքը, սակայն դրանք իսկապես Անկարայի դիրքորոշման նկատելի փոփոխությունների կարող են հանգեցնել: 2022 թ. դեկտեմբերի 28-ին Մոսկվայում հանդիպեցին Թուրքիայի, Ռուսաստանի և Սիրիայի պաշտպանության նախարարներն ու հետախուզության ղեկավարները⁵: Ըստ մամուլի տեղեկատվության՝ ձեռք բերվեց համաձայնություն Սիրիայի հյուսիսից թուրքական զորքերը դուրս բերելու մասին, որը դեռևս պաշտոնապես չի հաստատվել: Էրդոդանը ստիպված է վերանայել իր դիրքորոշումը Բաշար Ասադի նկատմամբ և նահանջել, որովհետև նախկինում արևմտյան լիդերների հետ ձայնակցած պնդում էր Սիրիայի նախագահի հրաժարականը: Սա թուրք-սիրիական առաջին պաշտոնական հանդիպումն էր վերջին տասնմեկ տարվա ընթացքում: Սիրիայի ՊՆ-ն հանդիպումը որակել է արդյունավետ և պահանջված⁶, որն արդեն հուշում է, որ Բաշար Ասադը Էրդոդանի համար հետայսու լեգիտիմ նախագահ է: Իհարկե անհնար է լրիվ կանխատեսել այն, ինչ որ մտադիր է անել Էրդոդանը: Որոշ փորձագետներ կարծում են, որ այս քայլով նա հող է նախապատրաստում սիրիական քրդերին վերջնական ջախջախիչ հարված հասցնելու համար, որոնց համարում է PKK-ի դաշնակից⁷:

Ֆին-շվեդական խնդիրը

Թուրքիայի միջազգային դերակատարման ուժեղացման մասին են վկայում Ֆինլանդիայի և Շվեդիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցության շուրջ ծավալված քաղաքական գործընթացները: Համառ պայքարից հետո հաջողվեց Էրդոդանից համաձայնություն կորզել, և Ֆինլանդիան 2023 թ. ապրիլի 4-ին դարձավ ՆԱՏՕ-ի անդամ⁸: Ավելի ուշ հավանություն տրվեց նաև Շվեդիայի անդամակցությանը: Սակայն փորձառու Էրդո-

⁵ Տե՛ս <https://rtvi.com/news/v-moskve-proshla-vstrecha-ministrov-oborony-i-glav-razvedok-rossii-turczii-i-sirii/>, <https://www.hurriyet.com.tr/gundem/son-dakika-sam-ile-11-yil-sonra-ilk-resmitemas-42195122>

⁶ Տե՛ս <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/16710181>

⁷ Տե՛ս <https://www.vedomosti.ru/politics/articles/2022/12/29/957533-ministri-oboroni-rossii-sirii-i-turtsii-vstretilis>

⁸ Տե՛ս <https://www.bbc.com/russian/news-65163323>

ղանը այս ընթացքում կրկին ցույց տվեց իր դիվանագիտական կարողությունները: Նա ուրեք Արևմուտքի ձեռքերը և առանց այլևայլությունների թելադրեց իր պայմանները: Սկզբում՝ 2022 թ. Մադրիդի գազաթնաժողովում տվեց համաձայնություն: ԱՄՆ նախագահ Ջոզեֆ Բայդենը շնորհավորեց բոլորին ընդհանուր հաջողության համար և շնորհակալություն հայտնեց Թուրքիային⁹, իսկ դաշինքի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը 2022 թ. հուլիսի 5-ին հայտարարեց ՆԱՏՕ-ին Ֆինլանդիայի և Շվեդիայի անդամակցության արձանագրություն ստորագրելու մասին: Լրատվամիջոցներն ու լրագրողներն էլ նշում էին, որ դաշինքի ընդլայնումն իսկական պարտություն կլինի Վլադիմիր Պուտինի համար¹⁰: Թուրքիան իր համաձայնությունը պայմանավորում էր մի շարք պահանջների կատարմամբ: Դրանց թվում են զենքի մատակարարման էմբարգոյի վերացումը, Անկարային քուրդ ակտիվիստների (Ֆինլանդիայում և Շվեդիայում ապրող և աշխատող, նաև այդ երկրների քաղաքացիություն ունեցող) արտահանձնումը, ինչպես նաև հյուսիսեվրոպական պետությունների՝ Թուրքիայի դեմ հանդես եկող քուրդ իրավապաշտպանների (Էրդողանի ընկալմամբ՝ ահաբեկիչների) աջակցությունից հրաժարումը: Այս նախապայմանները արձանագրված էին Թուրքիայի, Ֆինլանդիայի և Շվեդիայի միջև ստորագրված համատեղ հուշագրում¹¹: Փաստորեն Էրդողանին լուրջ զիջումներ արվեցին: Ֆինլանդիան և Շվեդիան համաձայնեցին վերացնել էմբարգոն, իսկ Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK) և նրա հետ փոխկապակցված քրդերին ահաբեկիչներ ճանաչել: Նրանք սկզբունքորեն համաձայնել են Թուրքիային հանձնել քուրդ ակտիվիստներին, բայց միայն ընտրողաբար: Անտեսվեց Եվրոպական կոնվենցիան, որն արգելում է արտահանձնել քաղաքական հողվածներով դատապարտված անձանց, ինչպես նաև նրանց, որոնց հետապնդում են իրենց ազգության, կրոնի և քաղաքական նախասիրությունների համար: Այսինքն՝ քրդերը, որոնք հետապնդվում են Թուրքիայում, զրկվում են այդ իրավունքից:

Փորձագետները կարծում են, որ Էրդողանը, ստորագրելով հուշագիրը, երկակի օգուտ քաղեց: Նախ նա պահպանեց երկրի պետական-ազգային շահերի պաշտպանի իր դերը: Երկրորդ՝ Միացյալ Նահանգները Թուրքիային, ամենայն հավանականությամբ, մի շարք զիջումներ կանի: Օրինակ՝ Բայդենը խոստացել է Թուրքիային F-16 ինքնաթիռներ մատակարարել, որը Էրդողանին ավելի վաղ մերժել էին ռուսական

⁹ St u Biden Thanks Erdogan for Dropping Veto on Sweden, Finland NATO Bids, <https://www.voanews.com/a/biden-thanks-erdogan-for-dropping-veto-on-sweden-finland-nato-bids/6639155.html>

¹⁰ St u A kick in the gut: Finland's, Sweden's drive to join NATO a defeat for Putin, a win for the West <https://www.usatoday.com/story/news/politics/2022/06/29/finlands-swedens-push-join-nato-a-kick-gut-putin/7749187001/?gnt-cfr=1>

¹¹ St u <https://www.aa.com.tr/en/russia-ukraine-war/here-is-what-finland-sweden-promised-to-address-turkiyes-security-concerns/2625235>

C-400 համակարգերի գնման պատճառով¹²: Ջիջումներն իսկապես կարելի է հաղթանակ համարել Թուրքիայի համար: Չէ որ այդ համաձայնության համար (որը ոչինչ չարժեր) Ռեջեփ Էրդոդանը կարողացավ Արևմուտքից ինչ-որ բան կորզել և մինևույն ժամանակ չընդհարվել Միացյալ Նահանգների հետ և իրենից վանել Պուտինի գործակալի խարանը, որը նրան կպցրել էին պատժամիջոցներին չմիանալու և ՆԱՏՕ-ին Շվեդիայի և Ֆինլանդիայի անդամակցությունը արգելափակելու պատճառով:

Սակայն փորձագետների լավատեսությունը վաղաժամ էր: Թուրքիայի առաջնորդը որոշել էր վարվել իր սովորության համաձայն՝ բարձրացնել խաղաղությունը և բոլորին «զգել»: Այսպես, Ռեջեփ Էրդոդանը պահանջեց ամենասեղմ ժամկետներում փոխել ահաբեկչության դեմ պայքարի օրենսդրությունը Ֆինլանդիայում և Շվեդիայում, թեպետ հուշագրում ժամկետների մասին նշված չէր: Հյուսիսեվրոպական երկրները խոստացել են դիտարկել ահաբեկչության մեջ կասկածվողների արտահանման հավանականությունը և հաշվի առնել թուրքական դիրքորոշումը: Ընդ որում, Թուրքիայի նախագահը հիանալի հասկանում էր ներշնչական քաղաքականության առանձնահատկությունները, որտեղ քուրդ պատգամավորների (որոնք, բնականաբար, խիստ հակաթուրքական են տրամադրված) ձայներից են կախված երկրի կառավարության աշխատանքը և հաջորդ տարվա բյուջեի նախագծի ճակատագիրը:

Վերջապես, Ռեջեփ Էրդոդանը անընդհատ զգուշացնում էր շվեդներին և ֆիններին իրենց ստանձնած պարտավորությունները չկատարելու (ավելի ճիշտ՝ Թուրքիայի կարծիքով չկատարելու) հետևանքների մասին, հայտարարելով, որ առանց հուշագրի պայմանների կատարման թուրքական խորհրդարանը չի վավերացնի այդ երկրների՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու համաձայնագիրը¹³:

Ուշագրավ է այն, որ Թուրքիան սկզբում ընդհանրապես ոչ մի առարկություն չունեի Շվեդիայի և Ֆինլանդիայի անդամակցության վերաբերյալ. դրանք ի հայտ եկան այն ժամանակ, երբ Ստոկհոլմը և Հելսինկին սկսեցին անդամակցության գործընթացը: Ֆիննական ՋԼՄ-ները նման պահվածքը համարում են վերջին պահին շահ կորզելու փորձ: Երբ նույնիսկ նշանակվել էր անդամակցության արձանագրության ստորագրման ամսաթիվը, Էրդոդանը կրկին հանդես եկավ լրացուցիչ պահանջներով¹⁴: 2022 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ընթանում էր դիվանագիտական փոխհրաձգություն այս խնդրի շուրջ: Թուրքիայի

¹² Տե՛ս Байден обещал Эрдогану получить "зеленый свет" на поставку F-16, <https://ria.ru/20220629/bayden-1799131654.html>

¹³ Տե՛ս Erdogan says Sweden, Finland must fulfil NATO agreement promises <https://www.aljazeera.com/news/2022/6/30/erdogan-calls-on-sweden-finland-to-fulfill-nato-deal-promises>

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

ԱԳՆ ղեկավար Մելուք Չավուշոյուն Հյուսիսատլանտյան դաշինքի գլխավոր քարտուղար Յենն Ստոլտենբերգի հետ մամուլի ասուլիսում զգուշացրեց, որ Թուրքիայի կողմից ՆԱՏՕ-ին Շվեդիայի և Ֆինլանդիայի անդամակցության մասին պայմանագրի վավերացումը կախված է ահաբեկչության դեմ պայքարում Ստոկհոլմի գործողություններից, քանի դեռ նրա ձեռնարկած միջոցները բավարար չեն, վավերացում չի լինի: Շվեդիայի նոր կառավարությունը ձգտում էր ամեն կերպ ձերբազատվել քրդական գլխացավանքից՝ Սիրիայի քուրդ աշխարհագորայիններին աջակցելու մեղադրանքներից, որպեսզի ստանար ՆԱՏՕ-ին անդամակցելու Թուրքիայի հավանությունը: Այս մասին նոյեմբերի 5-ին հայտարարեց Շվեդիայի արտգործնախարար Թոբիաս Բիլստրյոմը¹⁵: Շվեդներն ու ֆինները հասկացան, որ Էրդոդանին համոզելու համար պարտավոր են անխտիր կատարել նրա բոլոր պահանջները, քաղաքական մանևրները անօգուտ են: Իսկ պահանջները գնալով խստանում էին: 2023 թ. տարեսկզբի դրությամբ սայլը տեղից չէր շարժվում: Էրդոդանը կրկին հայտարարեց Շվեդիայի և Ֆինլանդիայի կողմից Թուրքիայի պայմանները չկատարելու մասին՝ հավելելով, որ Շվեդիան և Ֆինլանդիան մերժել են Անկարային մոտ 130 ահաբեկիչների արտահանձնելու հարցում: «Մենք Շվեդիային և Ֆինլանդիային ասել ենք, որ ՆԱՏՕ-ին ձեր անդամակցությունը հավանության արժանացնելու համար անհրաժեշտ է մեզ մոտ 130 ահաբեկիչ հանձնել: Ցավոք, դա չի արվել»¹⁶, – հիշեցնում էր նա: Էրդոդանը հավելել է նաև, որ Ստոկհոլմը մասնավորապես մերժել է լրագրող Բյուլենթ Քենեշի արտահանձնումը, որին Թուրքիայում դատապարտել են ազատագրկման: 2023 թ. հունվարին Թուրքիայի ներկայացուցչության առջև շվեդ ազգայնականները այրեցին Ղուրանը և ոտքերից կախեցին Էրդոդանի խրտվիլակը, որից հետո սկիզբ առած բողոքի բազմաահազարանոց ցույցերի ներքո Անկարայում հայտարարվեց, որ շվեդների հետ քննարկելու թեմա այլևս չունեն: Այնուամենայնիվ, արևմտյան սպասվելիք օգնությունը երկրաշարժի հետևանքների հաղթահարման համար այնքան կարևոր էր, որ Անկարայում աչք փակեցին այս ամռանը Ղուրանի այրման նոր դեպքերի վրա, և Շվեդիան ստացավ այդ թույլտվությունը, որը դիվանագիտական ճկունության ևս մեկ դրսևորում էր: Առաջիկայում մնացել է միայն Շվեդիայի անդամակցության վավերացումը Թուրքիայի խորհրդարանում:

Ռուսական գործոնը

Էրդոդանը համաշխարհային քաղաքականության մեջ դարձել է ծանրքաշային: Այս գործում ցցուն երևում է ռուսական գործոնի դրա-

¹⁵ Տե՛ս <https://p.dw.com/p/4J7H7>

¹⁶ <https://news.mail.ru/politics/54666112/?frommail=1>, Источник: Reuters

կան ազդեցությունը: Ինչպե՞ս Ռուսաստանը համաշխարհային հավակնություններ տվեց Էրդոդանին. այս հարցին շատերն են փորձում պատասխան գտնել: Ընդամենը մեկ տարի առաջ Ռուսաստանի և Թուրքիայի համագործակցությունը կարելի էր համարել ռուսական դիվանագիտության ձեռքբերում: Չե՞ որ այն Մոսկվային հնարավորություն էր տալիս ասելու, որ նույնիսկ ՆԱՏՕ-ի ներսում կան մարդիկ, ովքեր չեն վախենում առարկել ԱՄՆ-ին, հարգում են Ռուսաստանի շահերը և մեծ օգուտներ են ստանում նման մոտեցումից: Բայց 2022 թ. փետրվարի 24-ից սկսված ուկրաինական պատերազմից հետո այս գործընկերության մեջ ուժերի հավասարակշռությունը կտրուկ փոխվեց: Թուրքիան Ռուսաստանի համար վերածվել է արևմտյան աշխարհի միակ պատուհանի և այժմ կարող է իրեն թույլ տալ թելադրել երկկողմանի համագործակցության պայմանները:

Թուրքիայի միջոցով անհրաժեշտ ապրանքների ներմուծումը և Ստամբուլի օդանավակայանի օգտագործումը դեպի արևմտյան մայրաքաղաքներ դարձել են Ռուսաստանի համար գերկարևոր հանգամանք պատժամիջոցները շրջանցելու գործում¹⁷: Միաժամանակ թուրք դիվանագետներն անհրաժեշտ օդակ են դարձել Ուկրաինայի և Արևմուտքի հետ ռուսական շփումներում: Մոսկվայի շնորհիվ նախագահ Ռեջեփ Էրդոդանը ձեռք բերեց նախկինում չտեսնված միջազգային ազդեցություն և արդեն սկսեց տնօրինել թուրքական սահմանների ողջ երկայնքով գտնվող պետությունների հետ հարաբերություններում: Եվ փորձը ցույց է տալիս, որ այս քաղաքական գործչի ախորժակն արագ աճում է: Երբ նա Այա Սոֆիայի տաճարը կրկին մզկիթի վերածեց, սկսեց նաև բարձրաձայնել պատմական այլ «անարդարությունների» վերացման մասին՝ սկսած Էգեյան ծովի կղզիների կարգավիճակից, վերջացրած իրանական, սիրիական, կիպրական և հայկական «խնդիրների» լուծումով¹⁸: Նախկինում նախագահ Էրդոդանն աշխարհի աչքում շատ ավելի քիչ կշիռ ունեցող ֆիգուր էր թվում, քան Պուտինը, սակայն նոր իրականությունը նրան մղեց համաշխարհային քաղաքականության գագաթնակետին: Այժմ չի կարելի բացառել, որ իր համարձակ ցանկությունները Թուրքիայի նախագահը կփորձի կյանքի կոչել՝ ոչնչացնելով տարածաշրջանային կայունություն կոչվածի վերջին մնացորդները:

Հիմա արդեն ակնհայտ է. Ուկրաինայում ռազմական գործողությունների ամեն օր Ռուսաստանը կորցնում է Արևմուտքում իր միջազգային հեղինակությունն ու ազդեցությունը: Դրան հակառակ ամրապնդվում են հարևանների և դաշնակիցների դիրքերը, որոնց համա-

¹⁷ St' u **Gabrielyan H.** Turkey as a Transport Hub: a Vision Strategy for Integrating Regional Infrastructures and Services // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(1), 2022, էջ 11–29. <https://doi.org/10.46991/JOPS/2022.1.1.011>.

¹⁸ St' u <https://carnegie.ru/commentary/82288>

գործակցությունը Ռուսաստանի համար շատ ավելի անհրաժեշտ է դարձել, քան նախկինում: Առաջին հերթին դա վերաբերում է Թուրքիային, որովհետև Անկարան ինքն իրեն հակադրում է հավաքական Արևմուտքին և միաժամանակ, որպես Ռուսաստանի գրեթե միակ կապող օղակ, Եվրոպայի հետ օրեցօր մեծացնում է իր կշիռը, ինչպես նաև հաստատակամ է պատժամիջոցներին չմիանալու հարցում: Թուրքիայի նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Իբրահիմ Բալընը հունվարի 14-ին հայտարարեց, որ Արևմուտքի կողմից Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցներն անարդյունավետ են եղել և «Թուրքիան չի միանա հակառուսական պատժամիջոցներին, քանի որ դրանք ավելի շատ վնաս կհասցնեն Թուրքիայի տնտեսությանը, քան հենց ՌԴ-ին»¹⁹:

Գլոբալ ազդեցության հավակնող Մոսկվան այս օրերին գրեթե ամեն ինչում հենվում է Անկարայի վրա: 2022 թ. փետրվարից Թուրքիայի հետ Ռուսաստանի միջին ամսական ապրանքաշրջանառությունը կրկնակի աճել է 2017-2021 թվականների միջին ամսական ցուցանիշների համեմատ²⁰: Ռուս-թուրքական առևտրի ծավալները կարող են գերազանցել 60 մլրդ դոլարը: Թուրքիայի համար այդ աճը անսպասելի նվեր է դարձել, որը նա շտապում է վերածել քաղաքական շահի: Թուրքական գազային հանգույցի նախագիծն էլ շուտով կարող է դառնալ ռուսական գազը Եվրոպա մատակարարելու միակ միջոցը, այն բանից հետո, երբ Մոսկվան զրկվեց այլ երթուղիների վերահսկողությունից²¹: Էրդոդանը փորձեց օգտագործել նպաստավոր իրադրությունը և Պուտինից համաձայնություն կորզել դեպի Հյուսիսային Կիպրոսի չճանաչված թուրքական հանրապետություն ավիաչվերթներ կազմակերպելու, բայց այս անգամ անհաջող²²:

Այժմ Էրդոդանի համար հատկապես կարևոր է ուժ դրսևորել արտաքին քաղաքականության մեջ²³: Տնտեսական ծանր ճգնաժամը գործող իշխանության դեմ է, ուստի տնտեսության խնդիրները պետք է մթազնել արտաքին քաղաքական հաջողություններով, իսկ բոլոր ձախողումները ներկայացնել որպես հատուցում անկախ կուրսի:

Առայժմ նման մարտավարությունն ընդհանուր առմամբ գործում է: Թուրքիայի նախագահի գործունեությանը հավանություն տվողների և չտվողների հարաբերակցությունը հավասար է՝ ընտրողների 47 տոկոսը²⁴:

¹⁹ https://news.mail.ru/politics/54655408/?from_maillist=daily_main, Источник: Reuters

²⁰ Տե՛ս <https://www.nytimes.com/interactive/2022/10/30/business/economy/russia-trade-ukraine-war.html>

²¹ Տե՛ս **Александра Прокопенко** Новая уязвимость. Что предвещает возвращение России в зерновую сделку, <https://carnegieendowment.org/politika/88332>

²² Տե՛ս <https://www.vesti.ru/article/2954359>

²³ Այդ մասին տե՛ս **Gabrielyan H.** Erdogan against Turkey: Stalemate of “Patriot-F-35-S-400” triangle // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(2), 2022, էջ 49-72. <https://doi.org/10.46991/JOPS/2022.1.2.049>.

²⁴ Տե՛ս <https://www.dailysabah.com/opinion/columns/wind-of-turkish-opposition-bloc-quickly-subsides>

Ընդ որում, Թուրքիայի արտաքին գործընկերները շահագրգռված էին Էրդոդանի հաղթանակով: Հիմա դա ավելի հարմար է և՛ Ռուսաստանի, և՛ Արևմուտքի համար: Նախկինում արևմտյան առաջնորդները կարող էին չթաքցնել իրենց դժկամությունը կամակոր Էրդոդանի նկատմամբ: Իսկ հիմա նա եզակի ու անփոխարինելի մոդերատոր է Ռուսաստանի հետ հարաբերություններում: Ժամանակին նման դեր էր խաղում Պուտինը՝ Արևմուտքը կապելով Լուկաշենկոյի և Ասադի հետ: Հիմա Պուտինը ինքն է հայտնվել մեկուսացված վիճակում, երբ արևմտյան ազդակները նրան փոխանցվում են միմիայն Էրդոդանի միջոցով: Հերթական օրինակը վերջերս Անկարայում ԿՀՎ տնօրեն Ուիլյամ Բրնսսի և նրա գործընկեր Սերգեյ Նարիշկինի հանդիպումն էր: Կոշտ արձագանքներ չկան Անկարայի բազմաթիվ հակառուսական գործողություններին, ինչպիսիք են Ուկրաինային անօդաչու թռչող սարքերի²⁵ և նույնիսկ ռազմանավերի²⁶ մատակարարումները:

Եզրակացություն

Արդի միջազգային իրավիճակը, ուկրաինական պատերազմը և Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցները բարենպաստ պայմաններ են ստեղծել Թուրքիայի տարածաշրջանային և գլոբալ դերակատարման բարձրացման համար: Նախագահ Էրդոդանը և արտաքին քաղաքականության ոլորտի նրա թիմակիցները առավելագույնս օգտվում են այդ իրավիճակից: Առաջնորդվելով «մեկ ազգ երկու պետություն» հայեցակարգով՝ նրանք հստակորեն ամրապնդում են նաև Ադրբեյջանի դիրքերը: Փաստացի Էրդոդանը լրիվ դուրս է եկել համաշխարհային ուժային կենտրոնների ազդեցությունից և տնտեսական, ռազմական ու քաղաքական ասպարեզներում առաջնորդվում է սեփական օրակարգով: Նա բավականաչափ բաց և անթաքույց սպառնում է հակառակորդներին, և ոչ ոք, ոչ մի ուժ նրա խոսքի վրա ի վիճակի չեն կապանք դնել: Հետազոտական կենտրոններում կարծում են, որ Ռուսաստանի դեմ պատերազմող հավաքական Արևմուտքը և նաև Պուտինը կախվածության մեջ են ընկել Էրդոդանից:

Թուրքիայի նախագահի գործողությունների երկրպագուները կարծում են, որ իրենց առաջնորդը միշտ հաղթանակներ է տանում: Սակայն փորձագիտական որոշ դիտարկումների համաձայն՝ Ռեջեփ Էրդոդանին սկսել են ընկալել որպես Արևմուտքի վիթխարի բեռ, որի հետ դյուրին չէ լրջորեն պայմանավորվել որևէ բանի շուրջ: Իհարկե, այս եզրակացության համար առավել մեծ նշանակություն են ունեցել

²⁵ Տե՛ս [Տե՛ս Ժաֆեր Սմերով, Կատյա Յուսևիչ, Братья Байрактар: деньги не приоритет, наша поддержка на стороне Украины, https://www.bbc.com/russian/features-62592464](https://www.bbc.com/russian/features-62592464)

²⁶ Տե՛ս <https://www.navalnews.com/naval-news/2022/10/turkish-shipyard-launches-hetman-ivan-mazepa/>

ՌԴ-ի դեմ պատժամիջոցներին չմիանալը և ռազմական գործողությունները Սիրիայի քրդերի դեմ, որոնք ուղեկցվում են դաժան սպանություններով, բռնություններով և թալանով: Արևմուտքը կօգտագործի որոշ լծակներ հատկապես Թուրքիայում հակաերդողանական ընդդիմության աջակցությամբ ու նաև կփորձի ստեղծել դիվանագիտական մեկուսացման օղակ (Թուրքիայի առաջնորդը վիճել է բոլոր հարևանների հետ, բացի իրենից կախված Ադրբեջանից): Չի բացառվում, որ հերթը հասնի «օպերատիվ մեթոդին»: Խթանելով Թուրքիայի տնտեսական ճգնաժամը, գրկելով Էրդողանին դիվանագիտական ճակատներում հաղթանակներից Արևմուտքը հնարավոր է կրկնի 2016 թվականի հուլիսը, այսինքն՝ Էրդողանին ուժային ճանապարհով հեռացնելու փորձը: Այն ժամանակ Թուրքիայի նախագահին փրկել էր «հրաշքը» (ըստ լուրերի՝ Ռուսաստանից եկող). նա իմացել էր մահափորձի մասին և հասցրել էր հեռանալ այն շենքից, որտեղ գտնվում էր:

Փորձագիտական հետազոտական կենտրոններում նշում են նաև, որ Էրդողանը արտաքին քաղաքական ճակատում կարող է վերադասավորումներ անել՝ ելնելով երկրի ներսում ստեղծված տնտեսական դրամատիկ իրավիճակից և ընդդիմադիր քաղաքական կոալիցիաների ճնշումներից: Պատմությունը ցույց տվեց, որ նա պրագմատիկ է և ճկուն, կարող է տպավորիչ քաղաքական շրջադարձեր կատարել: Դժվար է կանխատեսել, թե ինչպես է Թուրքիայի նախագահը խաղարկելու իր խաղաքարտերը առաջիկայում: Ինչ վերաբերում է Թուրքիայի արտաքին քաղաքականությանը, ապա դա բնորոշվում է մեկ բառով՝ «անկանխատեսելիություն»: Համոզված ենք ցանկացած ժամի Էրդողանը կանի այն, ինչ ինքը ճիշտ կհամարի, միջազգային հանրություն կոչվածին նա օգտագործում է և ոչ թե ենթարկվում: Նա անընդմեջ փոփոխում է իր դիրքորոշումները՝ ձգտելով գործընթացները ուղղորդել երկրի ազգային շահերի պաշտպանությանը:

Թուրքիայի դերի ուժեղացումն աշխարհում, որի մասին անընդհատ շեշտում է Էրդողանը, այժմ ոչ թե հռետորաբանություն է, այլ մեծամասամբ իրականություն: Մինչև վերջերս Մոսկվան Անկարայի համար ուժեղ մրցակից էր, որը կարող էր միանձնյա որոշել Ղարաբաղի ճակատագիրը կամ քայլ առ քայլ Ասադին վերադարձնել Սիրիայի անվիճելի կառավարչի կարգավիճակ, սակայն ներկայիս Ռուսաստանը, որը տնտեսապես կախված է Թուրքիայից և թուրքերի համար զգայուն հարցերում թուլացած, այն Ռուսաստանն է, որի մասին Անկարայում կարող էին միայն երազել²⁷:

Էրդողանի կառավարման պատմությունը ցույց է տալիս, որ մի հարցում հաջողության հասնելով՝ նա անմիջապես անցնում է հաջորդ

²⁷ St' u Кирилл Кривошеев С ними вот что происходит: у России и Турции плохо получается дружить, https://news.ru/world/s-nimi-vot-cto-proishodit-u-rossii-i-turcii-ploho-poluchaetsya-druzhit/?__cf_chl_tk=QIeGC8uW_n9

ավելի գլոբալ խնդրի: Նրա պատկերացումներում երջանիկ ապագան միշտ ապագա է, իսկ ներկան՝ արտակարգ իրավիճակ, որը պահանջում է արմատական միջոցներ: Այսօրվա Էրդոդանն ունի ֆանտաստիկ պլաններ, ինչպիսիք են, օրինակ, Բոսֆորին զուգահեռ ջրանցքի կառուցումը: Մաքսիմալիզմն ու շանտաժը հարևանների հետ բանակցություններում, ինչպես նաև ազդեցության ոլորտի մշտական ընդլայնումը նրա գործելաոճն են:

Էրդոդանի դարաշրջանի ավարտը հայտարարվել էր դեռևս 2018 թվականին, երբ իշխող կուսակցությունը պարտություն կրեց Ստամբուլի և Անկարայի քաղաքապետերի ընտրություններում: Էրդոդանի պատասխանը հաղթանակն էր 2023 թ. նախագահական և խորհրդարանական միաժամանակյա ընտրություններում: Այժմ նա ընտելացել է աշխարհի առաջատար առաջնորդներից մեկի դերին:

ГАРИК КЕРЯН – *Дипломатия Эрдогана: политологический аспект.* – В нынешней сложной реальности, насыщенной геополитическими событиями, президент Турции Эрдоган проявляет весьма своеобразное политическое поведение. Продолжая лучшие традиции османской дипломатии, Эрдоган и его команда добиваются успехов на международных площадках. В этом смысле исследование современных особенностей и применения дипломатии Эрдогана имеет актуальное значение.

В статье мы рассмотрели проявления уклончивой дипломатии в контексте конфликта между коллективным Западом и Российской Федерацией и попытались выяснить реальную основу успеха и вызовы, возникающие в результате деятельности Эрдогана. Политический анализ международных и региональных событий последних лет выявил внешнеполитические цели и достижения Турции. Особо отмечается эффективность дипломатических инструментов посреднической миссии Анкары в российско-украинском конфликте/войне (хлебная сделка, обмен пленными, безопасность в проливах и равноправный подход к сторонам конфликта).

Мы особо коснулись шагов турецкой дипломатии по финско-шведскому вопросу. Об усилении международной роли Турции свидетельствуют политические процессы вокруг вступления Финляндии и Швеции в НАТО в 2022 году. За это время Эрдоган начал новую игру с Западом и без лишних слов диктовал свои условия.

Российский фактор — основа успеха Эрдогана.

С каждым днем военных действий на Украине Россия теряет свой международный авторитет и влияние на Западе. Наоборот, укрепляются позиции Турции, сотрудничество с которой стало для России гораздо нужнее, чем раньше. Анкара противопоставляет себя «коллективному Западу» и в то же время, как чуть ли не единственное связующее звено России с Европой, день ото дня наращивает свой вес, а также категорически не присоединяется к санкциям.

Ключевые слова: Эрдоган, дипломатия, внешняя политика, российский фактор, Украина, Путин, Финляндия, Швеция, расширение НАТО

GARIK KERYAN – *Erdogan's Diplomacy: Political Aspect.* – In the current complex reality, saturated with geopolitical events, Turkish President Erdogan is showing a very peculiar political behavior. Continuing the best traditions of Ottoman diplo-

macy, Erdogan and his team are making progress on international platforms. In this sense, the study of modern features and the application of Erdogan's diplomacy are of current importance.

In the article, we examined the manifestations of evasive diplomacy in the context of the conflict between the collective West and the Russian Federation and tried to find out the real basis for success and the challenges that arise as a result of Erdogan's activities. The political analysis of international and regional events of recent years has revealed Turkey's foreign policy goals and achievements. The effectiveness of the diplomatic tools of Ankara's mediation mission in the Russian-Ukrainian conflict/war (grain deal, exchange of prisoners, security in the straits and an equal approach to the parties to the conflict) is especially noted.

We touched especially on the steps taken by Turkish diplomacy on the Finnish-Swedish issue. The political processes around the accession of Finland and Sweden to NATO in 2022 testify to the strengthening of Turkey's international role. During this time, Erdogan began a new game with the West and without further ado dictated his terms.

The Russian factor is the basis of Erdogan's success.

With every day of hostilities in Ukraine, Russia is losing its international prestige and influence in the West. On the contrary, the positions of Turkey are being strengthened, cooperation with which has become much more necessary for Russia than before. Ankara opposes itself to the "collective West" and at the same time, as almost the only link between Russia and Europe, is increasing its weight day by day, and also categorically does not join the sanctions.

Keywords: *Erdogan, diplomacy, foreign policy, Russian factor, Ukraine, Putin, Finland, Sweden, NATO expansion*

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1920 թթ. (գիրք առաջին), Երևան, ԵՊՀ հրատ., 2023, 484 էջ:

Լույս է տեսել և ընթերցողի դատին է հանձնվել ճանաչված ու անվանի գիտնական, միջազգայնագետ-պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանի ծավալուն և արժեքավոր նոր մենագրությունը, որը վերնագրված է «Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1920 թվականներին»: Գրքի հեղինակը նախկինում ևս բազմիցս անդրադարձել է այդ և դրան հարակից թեմաներին՝ լույս ընծայելով մեկ տասնյակ մենագրություններ և հարյուրից ավել հոդվածներ: Հանրահայտ իրողություն է, որ առհասարակ Հայաստանում, Սփյուռքում և արտասահմանյան տարբեր երկրներում, տարբեր ժամանակներում և ամենատարբեր լեզուներով վերոհիշյալ թեմայով լույս են տեսել մեծ թվով գրքեր, հոդվածներ և այլն: Սակայն թեման այն աստիճանի համընդգրկուն է, որ դեռևս երկար ժամանակ գիտական պրպտումները շարունակվելու են:

Այդ բոլորի համապատկերում պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանի նոր մենագրության լույս աշխարհ գալը անկասկած կարելի է համարել երևույթ, քանի որ այն վերոհիշյալ պրոբլեմին նվիրված մի ամբողջական և ընդհանրացնող ուսումնասիրություն է: Այն անկասկած կոչված է ընդլայնելու և խորացնելու մեր իմացություններն ու պատկերացումները առաջին Հանրապետության ողբերգական, բայց մինևս ժամանակ հերոսական ժամանակաշրջանի վերաբերյալ:

Հեղինակը խոստանում է, որ առաջիկայում իր բարձրացրած թեման ունենալու է շարունակություն, և գրքի երկրորդ ու հաջորդ մասերը ընդգրկելու են առաջին Հանրապետության գոյության վերջին շրջանի պատմության իրողությունները:

Արժևորելով պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանի աշխատությունը՝ մենք առաջին հերթին նշելու ենք, որ այն Հայաստանի առաջին Հանրապետության կարճ, բայց և վերելքներով ու վայրէջքներով հարուստ կյանքի տարեգրությունը և իրողություններից շատերը մատուցում է նորովի, բազմաթիվ աղճատված, հաճախ նաև միտումնավոր կեղծված հարցեր ներկայացնելով ճշմարտության լույսի ներքո: Այդ հանգամանքը շեշտելիս մենք նկատի ունենք, որ նախկինում, հատկապես Խորհրդային Միության շրջանի հայ պատմաբանների ուսումնասիրություններում, միտումնավոր կամ պարզապես առաջնորդվելով ամբողջատի-

րական կամ խիստ գաղափարայնացված պետության սկզբունքներով, հաճախ առաջին Հանրապետության պատմությունը ներկայացվել է մեղմ ասած ծուռ հայելու մեջ: Հայաստանում և Մփյուռքում գիտնականներից ոմանք այդ խոտորնակ ճանապարհով գնացել են նաև հարցի ամբողջ տարողությունը չգիտակցելու կամ իրենց տրամադրության տակ ճշմարտության լույս սփռող արխիվային բավարար նյութեր չունենալու պատճառով: Հետևաբար Գեղամ Պետրոսյանի աշխատության արժեքը կարևորվում է նրանով, որ գրքում լայնորեն օգտագործվում է Հայաստանի ազգային, Ռուսաստանի Դաշնության և այլ արխիվների հարուստ նյութերը, որոնք հասու չեն եղել մեր սփյուռքահայ հետազոտողներից շատերին: Հիրավի, Պետրոսյանը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է մտցրել արխիվային բազմաթիվ փաստաթղթեր, որոնք մինչև այժմ վրիպել են հետազոտողների աչքերից, և որոնք օգնում են նոր լույսի տակ ներկայացնելու բազմաթիվ իրողություններ: Հեղինակը ընթերցողին մատուցում է փաստեր, վկայություններ, որպեսզի նա աննախապաշար կերպով խորհրդածի և հանգի եզրակացությունների: Եվ քանի որ այնքան էլ դյուրին ու հեշտ չէ ըմբռնել քաղաքական այն բարդ խաղերը, որոնք կատարվում էին առաջին Հանրապետության շուրջը, հեղինակը բացում է փակագծերը, լուսաբանում իրադարձությունների ներքին տրամաբանությունը՝ ընթերցողին հնարավորություն տալով հասու լինելու ճշմարտությանը և չղառնալու ստի ու կեղծիքի գոհ:

Պրոֆեսոր Պետրոսյանը ջանասիրաբար և քրտնաջան կերպով հավաքել ու առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել հայկական և օտար մամուլի ու մասնագիտական գրականության հարուստ նյութերը: Դրանք լրացուցիչ կովան են դարձել իր տեսակետները հիմնավորելու համար:

Սույն աշխատության դրական կողմերից ենք համարում նաև այն, որ հեղինակը մեծ տեղ է հատկացնում առաջին Հանրապետության գոյության ողջ ընթացքում դիվանագիտական բանակցային գործընթացները ներկայացնելուն, որը հնարավորություն է տալիս ամբողջական տեսքով պարզաբանելու Հանրապետության կառավարության ընդունած որոշումների ներքին տրամաբանությունը, ինչպես նաև թուրքական կողմի շահագրգռությունների ներքին զսպանակները:

Կասկածից վեր է, որ Գեղամ Պետրոսյանի աշխատությունն ունի նաև ճանաչողական և ավելին՝ ուսուցողական նշանակություն և արժեք: Դա պայմանավորված է նրանով, որ միանգամայն ակնհայտ է, որ արտաքին քաղաքականության, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության բնագավառում Հայաստանի առաջին և երրորդ հանրապետությունների պատմության միջև գոյություն ունեն բազմաթիվ ընդհանրություններ: Իսկապես, կարծես պատմությունը կրկնվում է. արդարև, հիմնախնդիրն ունի արդիական մեծ հնչեղություն:

Գրքի շահեկան կողմերից մեկը համարում ենք այն, որ պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանը անդրադառնում է առաջին Հանրապետության արտաքին և ներքին քաղաքականության պարբերացման խնդրին՝ այն բաժանելով երեք հիմնական փուլերի և մանրակրկիտ լուսաբանելով այդ փուլերի տարբերիչ առանձնահատկությունները: Դա ընթերցողին հնարավորություն է տալիս պարզորոշ պատկերացնելու, թե քայլ առ քայլ, ճակատագրական անխուսափելիությամբ դեպի ուր էր գնում հայ ժողովրդի հավաքական կամքով և բազկի ուժով ստեղծված մեր մանուկ Հանրապետությունը:

Հեղինակը անդրադարձ է կատարում նաև հայ դիվանագիտության գործունեությանը, որը Հայաստանի շուրջը ստեղծված վտանգավոր պայմաններում կատարում էր կոպիտ սխալներ, հաճախ գտնվում էր շփոթահար վիճակում, ընկնում խարխափումների մեջ, կորցնում նպատակին հասնելու ճիշտ ճանապարհի կողմնորոշիչները: Պրոֆեսոր Պետրոսյանը համոզիչ փաստերով բացահայտում է նաև հայ դիվանագիտության կողմից թույլ տրված սխալների պատճառները: Նա իրավացիորեն նշում է, որ դրանք այսօր կարիք ունեն նորովի և հանգամանալից վերլուծության, որպեսզի մեր երրորդ Հանրապետությունում չկրկնվեն անցյալի ցավալի սխալները:

Մենք հարկ ենք համարում հատուկ շեշտել, որ թեև Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունը պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանի համար ոգեշնչման աղբյուր է, սակայն մինևույն ժամանակ նա այդ կարճատև կյանք ունեցած, բայց և իր դժվարին ճանապարհին անցած մեր առաջին Հանրապետության պատմության դրվագները վերլուծում է քննախույզ հայացքով, լայնախոհությամբ, միշտ հավատավոր ճշմարտությանը, հեռու ազգային նեղմտությունից:

Ողջունելով պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանի այս արժեքավոր գրքի լույսընծայումը՝ մենք անհամբերությամբ ենք սպասում նրա խոստացած նոր աշխատություններին:

ՎԱՀԱՆ ԲՍՅՈՒԴՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Ալեն Գևոնդյան** – քաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի դոցենտ
Ален Гевондян – кандидат политических наук, доцент кафедры политологии ЕГУ
Alen Ghevondyan – Candidate of Political Sciences, Associate Professor at the Chair of Political Science, YSU
Էլ. փոստ՝ a.ghevondyan@ysu.am
2. **Ժակ Մանուկյան** – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ
Жак Манукян – кандидат исторических наук, доцент, заведующий кафедрой международных отношений и дипломатии ЕГУ
Zhak Manukyan – Candidate of History, Associate Professor, Head of the Chair of International Relations and Diplomacy, YSU
Էլ. փոստ՝ zhak.manukyan@ysu.am
3. **Մարութ Վարդազարյան** – պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ
Марут Вардазарян – кандидат исторических наук, доцент кафедры международных отношений и дипломатии ЕГУ
Marut Vardazaryan – Candidate of History, Associate Professor at the Chair of International Relations and Diplomacy, YSU
Էլ. փոստ՝ marutvardazaryan@ysu.am
4. **Արմենակ Մանուկյան** – պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր
Арменак Манукян – доктор исторических наук, профессор кафедры политологии ЕГУ
Armenak Manukyan – Doctor of History, Professor at the Chair of Political Science, YSU
Էլ. փոստ՝ armenak.manukyan@ysu.am
5. **Աշոտ Ենգոյան** – քաղաքական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր
Ашот Енгоян – доктор политических наук, профессор кафедры политологии ЕГУ
Ashot Yengoyan – Sc. D. in Political Science, Professor at the Chair of Political Science, YSU
Էլ. փոստ՝ ashotyengoyan@ysu.am
6. **Խոսրովադուխտ Ազատյան** – քաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի դասախոս
Хосровадухт Азатян – кандидат политических наук, преподаватель кафедры политологии ЕГУ
Khosrovadukht Azatyan – Candidate of Political Sciences, Lecturer at the Chair of Political Science, YSU
Էլ. փոստ՝ khosrovadukht.azatyan@ysu.am, aniazatyan2017@gmail.com

7. **Փայլակ Ենգոյան** – քաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի դասախոս
Пайлак Енгоян – кандидат политических наук, преподаватель кафедры политологии ЕГУ
Paylak Yengoyan – Candidate of Political Sciences, Lecturer at the Chair of Political Science, YSU
Էլ. փոստ՝ paylak.yengoyan@ysu.am
8. **Գարիկ Քերյան** – քաղաքական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր
Гарик Керян – доктор политических наук, профессор кафедры политологии ЕГУ
Garik Keryan – Sc. D. in Political Science, Professor at the Chair of Political Science, YSU
Էլ. փոստ՝ g.keryan@ysu.am
9. **Վահան Բայբուրդյան** – պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ваан Байбуртян – доктор исторических наук, профессор
Vahan Bayburdyan – Sc. D. in History, Professor

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ INTERNATIONAL RELATIONS

- Ալեն Ղևոնդյան** – ՀՀ անվտանգության ապահովման և ազգային շահերի հստակեցման հիմնախնդիրները փոխակերպվող աշխարհում դաշնակցային հարաբերությունների նոր հարացույցների ներքո 3
- Ален Гевондян** – Проблемы обеспечения безопасности и конкретизации национальных интересов РА в трансформирующемся мире в контексте новых парадигм союзничества
- Ален Ghevondyan** – The Fundamental Problems of Security and National Interests in the Changing World under the New Paradigms of Allied Relationships
- Ճակ Մանուկյան** – Խաղաղապահ գործունեությունը որպես Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության առաջնահերթություններից մեկը (2011-2022 թթ.) (ռուս.) 22
- Жак Манукян** – Миротворческая деятельность как один из приоритетов Организации договора о коллективной безопасности (2011-2022 гг.)
- Zhak Manukyan** – Peacekeeping as One of the Priorities of the Collective Security Treaty Organization (2011-2022) (rus.)
- Մարութ Վարդազարյան** – «Չանգեզուրի միջանցքի» հիմնախնդիրը արդի տարածաշրջանային քաղաքական զարգացումներում 34
- Марут Вардазарян** – Проблема «Зангезурского коридора» в современном региональном политическом развитии
- Marut Vardazarayan** – The Issue of “Zangezur Corridor” in the Current Regional Developments

ՔՎՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ПОЛИТОЛОГИЯ POLITICAL SCIENCE

- Արմենակ Մանուկյան** – Քաղաքական գործընթացները Խորհրդային Հայաստանում (1940-1950 թթ.) (ռուս.) 48
- Арменак Манукян** – Политические процессы в Советской Армении (1940-1950 гг.)
- Armenak Manukyan** – Political Processes in Soviet Armenia (1940-1950) (rus.)
- Աշոտ Ենգոյան, Խոսրովադուխտ Ազատյան** – Գլոբալ զարգացման հարացույցի գաղափարական և արժեքային հիմքերի փոխակերպման նախադրյալները 65
- Ашот Енгоян, Хосровадухт Азатян** – Предпосылки трансформации идейных и ценностных основ парадигмы глобального развития
- Ashot Yengoyan, Khosrovadukht Azatyan** – Prerequisites for the Transformation of the Ideological and Value Foundations of the Global Development Paradigm

Փարիկ Ենգոյան – Գլոբալ զարգացման հարացույցի ֆինանսատնտեսական հիմքերի փոխակերպման գործընթացը	78
Пайлак Енгоян – Финансово-экономическая основа парадигмы глобального развития	
Paylak Engoyan – The Financial and Economic Basis of the Global Development Paradigm	
Փարիկ Բեռյան – Էրդողանի դիվանագիտությունը. քաղաքագիտական ասպեկտ	91
Гарик Керян – Дипломатия Эрдогана: политологический аспект	
Garik Keryan – Erdogan’s Diplomacy: Political Aspect	

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
КНИЖНОЕ ОБОЗРЕНИЕ
BOOK REVIEW

Վահան Բայրուրյան – Գեղամ Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1920 թթ. (գիրք առաջին).....	105
Ваан Байбурдян – Гегам Петросян, Международное положение и внешняя политика Республики Армения в 1918-1920 гг. (книга первая)	
Vahan Bayburdyan – Gegham Petrosyan, International Situation and Foreign Policy of the Republic of Armenia in 1918-1920 (book one)	
Տեղեկություններ հեղինակների մասին.....	108
Сведения об авторах	
Information about the Authors	

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Վայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218, 060 710 219

Հրատարակչական խմբագիր՝
Издательский редактор
Publishing Editor

Արմեն Հովակիմյան
Армен Овакимян
Armen Novakimyan

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Փայանե Գրիգորյան
Гаяне Григорян
Gayane Grigoryan

Թողարկման պատասխանատու՝
Ответственный выпуска
Issued by

Հասմիկ Եսայան
Насмик Есаян
Hasmik Yesayan

Ստորագրված է տպագրության 25. 09. 2023: